ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
2022 թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Բովանդակություն

1. Նախաբան 3

2. Ղարաբաղյան հիմնահարց 4

3. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում, մարդկության դեմ հանցանքների կանխարգելման օրակարգ 5

4. Ռուսաստանի Դաշնություն 6

5. Ամերիկայի Միացյալ Նահանգներ 7

6. Եվրոպական Միություն 9

7. Հարևան երկրներ 12

7.1 Վրաստան 12

7.2 Իրանի Իսլամական Հանրապետություն 13

7.3 Թուրքիայի Հանրապետություն 15

8. Եվրասիական տարածաշրջանի երկրներ 16

9. Եվրոպական երկրներ 18

10. Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ 30

11. Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրներ 33

12. Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրներ 35

13. Միջազգային բազմակողմ համագործակցություն 37

13.1 Միավորված ազգերի կազմակերպություն 37

13.3 Եվրոպայի խորհուրդ 41

13.4 Անկախ պետությունների համագործակցություն 42

13.5 Եվրասիական տնտեսական միություն 43

13.6 Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն 44

13.7 Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն 45

13.8 Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն 46

14. Միջազգային տնտեսական համագործակցություն 47

15. Մարդու իրավունքների պաշտպանության հարցեր 48

16. Գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրներ.....50
17. Խաղաղապահ գործունեություն.....52
18. Իրավապայմանագրային դաշտ.....52
19. Հյուպատոսական ծառայություն.....52
20. Հանդիպումներ և փոխադարձ այցելություններ.....54
21. Դիվանագիտական հարաբերություններ.....54
22. Դիվանագիտական դպրոց.....54
23. Միջազգային հանրային կարծիք.....55

1. Նախաբան

2022թ. Հայաստանի Հանրապետության դիվանագիտության առջև դրված խնդիրների շարքում շարունակում էին գերակա մնալ տարածաշրջանում երկարաժամկետ կայունության և խաղաղության օրակարգի հաստատումը, ՀՀ տարածքային ամբողջականության հանդեպ Ադրբեջանի կողմից սանձազերծած քայլերին հակազդումը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ՝ բացառապես քաղաքական միջոցներով կարգավորումը:

Անտեսելով միջազգային հանրության կոչերը և Հայաստանի Հանրապետության հանձնառությունը տարածաշրջանում խաղաղություն հաստատելու հարցում՝ Ադրբեջանը շարունակում է իր ագրեսիվ և ոչ կառուցողական քաղաքականությունը: Հրադադարի խախտումները կրում են պարբերական բնույթ, իսկ **2021թ. մայիսից** ի վեր շարունակաբար ագրեսիվ գործողություններ է իրականացրել՝ օկուպացնելով Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքից **շուրջ 150 քառակուսի կիլոմետր**:

2021թ. մայիսի 11-ի լույս 12-ի գիշերը տեղի է ունեցել առաջին լայնածավալ ադրբեջանական հարձակումը՝ ապօրինաբար հատելով Հայաստանի Հանրապետության սահմանը Սյունիքի մարզի Սև լճի տեղանքում ադրբեջանական կողմը 3,5 կմ խորացել է ՀՀ ինքնիշխան տարածքում:

2021թ. նոյեմբերի 14-ին՝ հայ-ադրբեջանական սահմանագծի արևելյան տեղամասերից մեկում Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները զրահատեխնիկայի աջակցությամբ ներխուժել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք, որի հետևանքով չորս հայկական հենակետեր հայտնվել էին շրջափակման մեջ: ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժած ադրբեջանական զինտեխնիկան և զորքը բանակցությունների արդյունքում դուրս են եկել ՀՀ տարածքից, ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները դուրս են բերվել վերոնշյալ չորս մարտական դիրքերի շրջափակումից: Այնուամենայնիվ՝ նշված հատվածում շարունակում են դիրքավորված մնալ դեռևս մայիսին ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժած ադրբեջանական զինծառայողներ:

2022թ. սեպտեմբերի 13-ին ադրբեջանական զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի նկատմամբ սանձազերծվել է հերթական լայնածավալ հարձակումը: Օգտագործելով ծանր հրետանի, համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր և մարտական անօդաչու թռչող սարքեր՝ ադրբեջանական զինուժը Հայաստանի ինքնիշխան տարածքի խորքում գնդակոծել է մի շարք բնակելի տարածքներ և համայնքներ՝ միտումնավոր թիրախավորելով խաղաղ բնակչությանը և կենսական նշանակության քաղաքացիական ենթակառուցվածքները: Հարձակման թիրախ են դարձել նաև լրագրողներ, ինչպես նաև շտապօգնության մեքենաներ: Հայաստանի Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերից ժամանակավոր տեղահանվածների ընդհանուր թիվը կազմել է ավելի քան **7600** մարդ, հիմնականում կանայք և տարեցներ, որոնցից **1437 երեխա և 99 հաշմանդամություն ունեցող անձ:**

Ագրեսիայի հետևանքով զոհերի և անհետ կորածների թիվը գերազանցում է **233**-ը, զոհերից **3-ը** և անհետ կորածներից **2-ը** խաղաղ բնակիչ են: Վիրավորվել է **293** զինծառայող և **8** խաղաղ բնակիչ, առնվազն **20** զինծառայող գերեվարվել է: Ապացույցներ կան գերեվարված կամ արդեն մահացած զինծառայողների, այդ թվում կանանց, խոշտանգումների և անդամահատման, արտադատական սպանությունների բազմաթիվ դեպքերի, հայ ռազմագերիների նկատմամբ դաժան վերաբերմունքի, ինչպես նաև դիերի նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունքի մասին:

Չնայած ստեղծված իրավիճակին Հայաստանի համար դիվանագիտական լուծումները հանդիսանում են բացարձակ առաջնահերթություն, քանի որ ուժի հետագա կիրառումը կամ դրա սպառնալիքը կխաթարի տարածաշրջանում ընթացող գործընթացները՝ ուղղված Հարավային Կովկասում խաղաղության և անվտանգության հաստատմանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող և դրանից բխող բոլոր հարցերի կարգավորմանը:

Ելնելով վերոնշյալից՝ շարունակվել է ՀՀ դիվանագիտական ծառայության գործառույթների իրականացումը, մասնակցությունը երկկողմ և բազմակողմ մեծաթիվ տարբեր մակարդակի և ձևաչափի հանդիպումների: Հայաստանի դիվանագիտական ծառայության ակտիվությամբ պայմանավորված, պետությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների կողմից արվել են բազմաթիվ հայտարարություններ՝ դատապարտելով ադրբեջանական ագրեսիան:

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում կայացել է Հանրապետության նախագահներ Արմեն Սարգսյանի և Վահագն Խաչատուրյանի **7** այց, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի **23** այց, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի **27** այց: Հայաստան է այցելել օտարերկրյա պետության **7** նախագահ, կառավարության **6** ղեկավար, արտաքին գերատեսչության **7** ղեկավար:

2. Ղարաբաղյան հիմնահարց

Չնայած **2020թ. 44-օրյա** պատերազմից հետո ստեղծված իրավիճակին, Ադրբեջանի կողմից իրականացվող ռազմական հռետորաբանությանը և քայլերին՝ Հայաստանը բազմիցս վերահաստատել է, որ դիվանագիտական լուծումները բացարձակ առաջնահերթություն են՝ չխաթարելու տարածաշրջանում ընթացող գործընթացները՝ ուղղված Հարավային Կովկասում խաղաղության և անվտանգության հաստատմանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող և դրանից բխող բոլոր հարցերի կարգավորմանը:

Սակայն, կարգավորման գործընթացը խաթարելու հերթական քայլն Ադրբեջանը իրականացրեց **դեկտեմբերի 12-ից՝** շինծու բնապահպանական պատրվակներով Լաչինի միջանցքի շարունակական ապօրինի արգելափակմամբ:

Լաչինի միջանցքի ապօրինի փակման հետևանքով ստեղծվել է հումանիտար ճգնաժամ. Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքներն ու անվտանգությունը պետք է միջազգային հովանու ներքո դառնան Ստեփանակերտի և Բաքվի միջև բանակցությունների առարկա:

Ադրբեջանը իր գործողություններում շարունակում է խախտել միջազգային մարդասիրական իրավունքի, ՄԱԿ-ի կանոնադրությունը, Հելսինկյան եզրափակիչ ակտը, առհասարակ միջազգային իրավունքը: Ադրբեջանն իր ագրեսիվ խոսույթով և գործելակերպով Լեռնային Ղարաբաղի հայությանը ցեղասպանության ենթարկելու և Հայաստանի նկատմամբ նոր ագրեսիայի նախապատրաստություններ է տեսնում:

3. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում, մարդկության դեմ հանցանքների կանխարգելման օրակարգ

2022թ. մարտի 31-ին ՄԱԿ Մարդու իրավունքների խորհուրդը առանց քվեարկության (կոսենսուսով) ընդունեց Հայաստանի կողմից ներկայացված «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևը: Բանաձևը, որը ներկայացվում է երկու տարին մեկ պարբերականությամբ, ցեղասպանության կանխարգելմանն ուղղված միջազգային ջանքերը համախմբող կարևոր նախաձեռնություն է, մասնավորապես, այն իր ներդրումն է ունենում ցեղասպանությունների և զանգվածային այլ ոճրագործությունների հարցերով քաղաքական և իրավական համընդհանուր չափանիշներ ձևավորելու հարցում: 2022թ. ներկայացված Բանաձևը համահեղինակել են **66** պետություն՝ ՄԱԿ բոլոր **5** տարածաշրջանային խմբերից: Բանաձևն, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է նոր տեխնոլոգիաների, մասնավորապես, սոցիալական մեդիա հարթակների չարաշահմանը և դրանց միջոցով տարածվող ապատեղեկատվությանն ու ատելության խոսքի դեմ պայքարի խնդիրներին:

2022թ. հոկտեմբերի 4-ին Մարդու իրավունքների խորհրդի 51-րդ նստաշրջանի շրջանակներում Հայաստանը հանդես եկավ Թվային տեխնոլոգիաների և ատելության խոսքի վերաբերյալ համատեղ հայտարարությամբ: Նախաձեռնությունը համահեղինակեցին **42** պետություններ ՄԱԿ բոլոր տարածաշրջանային խմբերից:

2022թ. դեկտեմբերի 12-ից 13-ը Երևանում տեղի ունեցավ **«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 4-րդ Գլոբալ ֆորումը,** որը նվիրված էր նոր տեխնոլոգիաների դարաշրջանում ցեղասպանության կանխարգելման հարցին: Ֆորումը կազմակերպվել էր ՄԱԿ Գլխավոր քարտուղարի Ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ խորհրդականի աջակցությամբ և վերջինիս մասնակցությամբ: Ֆորումի աշխատանքներին մասնակցեցին հայտնի գիտնականներ, ցեղասպանագետներ, ՄԱԿ մարդու իրավունքների հարցերով զբաղվող բարձրաստիճան պաշտոնյաներ: Ֆորումի աշխատանքների արդյունքում ընդունվել է Համատեղ գործողությունների հռչակագիրը, որը հասանելի է www.genocideprevention.am կայքէջում:

4. Ռուսաստանի Դաշնություն

2022թ. ՀՀ-ՌԴ դաշնակցային հարաբերությունները շարունակել են ակտիվ զարգանալ բոլոր ուղղություններով:

Տարին նշանավորվել է ՀՀ և ՌԴ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա և ՀՀ և ՌԴ միջև Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին Մեծ պայմանագրի ստորագրման 25-ամյա հոբելյաններով, որոնց առիթով անցկացվել են հայ-ռուսաստանյան բազմաշերտ հարաբերությունները ներկայացնող ոլորտային մի շարք միջոցառումներ:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ունեցել են **7 հանդիպում** և **14 հեռախոսազրույց**:

Ապրիլի 19-ից 20-ը կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջին պաշտոնական այցը ՌԴ՝ նվիրված երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին: Ընդունվել է համատեղ հայտարարություն:

Հուլիսի 25-ին Ղրղզստանի Չոլպոն-Ատա քաղաքում Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակում տեղի է ունեցել երկու երկրների կառավարությունների ղեկավարների հանդիպումը:

Սեպտեմբերի 6-ից 9-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով եղել է Վլադիվոստոկում՝ մասնակցելու «Բազմաբևեռ աշխարհի ճանապարհին» թեմայով Արևելյան տնտեսական 7-րդ համաժողովի լիագումար նստաշրջանին, որի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի և ՌԴ նախագահի հանդիպումը:

Հոկտեմբերի 31-ին Սոչիում տեղի է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի եռակողմ հանդիպումը: Հանդիպման արդյունքներով ընդունվել է եռակողմ հայտարարություն:

Մարտի 10-ին Անթալիայի դիվանագիտական ֆորումի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ: Անդրադարձ է եղել հայ-ռուսաստանյան համագործակցության օրակարգին, քննարկվել են դաշնակցային հարաբերությունների առավել ամրապնդմանը վերաբերող հարցեր:

Ապրիլի 8-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Մոսկվա: Այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է ՌԴ ԱԳ նախարարի հետ: Այցի շրջանակներում ստորագրվել է ՀՀ և ՌԴ ԱԳ նախարարությունների միջև համագործակցության 2022-2023 թվականների համար խորհրդատվությունների ծրագիրը:

Հունիսի 9-ին տեղի է ունեցել ՌԴ ԱԳ նախարարն աշխատանքային այցը ՀՀ: Երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների քննարկման օրակարգն ընդգրկում էր հայ-ռուսաստանյան դաշնակցային հարաբերությունների հետագա զարգացմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Սեպտեմբերի 5-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Մոսկվա: Քննարկվել է տարածաշրջանային անվտանգության և կայունության խնդիրների լայն շրջանակ: Մտքեր են փոխանակվել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերի, տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակման աշխատանքների վերաբերյալ: Հանգամանալից անդրադարձ է կատարվել Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորմանը, ԼՂ հակամարտությանը վերաբերող հարցերին:

Հոկտեմբերի 12-ին Աստանայում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ: Անդրադարձ է եղել տարածաշրջանային անվտանգության և կայունության մի շարք հարցերի: Մտքեր են փոխանակվել Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագրի մշակման աշխատանքների վերաբերյալ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցերի շուրջ:

Սեպտեմբերի 19-ից 20-ը ՀՀ-ում անցկացվել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության համաժողովը:

5. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Հաշվետու տարվա ընթացքում պահպանվել է ԱՄՆ-ի հետ ակտիվ երկխոսությունը, տեղի են ունեցել պաշտոնական փոխայցելություններ, աշխատանքային խմբերի հանդիպումներ, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության և Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ագրեսիայի, Լաչինի միջանցքի արգելափակման և մարդասիրական աղետի առաջացման կապակցությամբ տեղի են ունեցել մի շարք հեռախոսազրույցներ:

Հունվարի 7-ին Հայաստանի Հանրապետությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները նշել են դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը:

Մարտի 7-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանի և ԱՄՆ պետքարտուղարության Եվրոպական և Եվրասիական հարցերի Բյուրոյի Կովկասի հարցերի գրասենյակի ղեկավար Լաուրա Հոկլայի համանախագահությամբ կայացել է Հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության նիստի առցանց խորհրդակցությունների բազմաոլորտ համագործակցության վերաբերյալ հերթական նիստը:

Մարտի 23-ին կայացել է ՀՀ-ԱՄՆ ռազմավարական երկխոսության երկրորդ առցանց նիստը, որի ընթացքում քննարկվել են պաշտպանական և անվտանգային ոլորտներում երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցեր:

Ապրիլի 18-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Էնդրյու Շոֆերին, որի ընթացքում զրուցակիցները մտքեր են փոխանակել խաղաղության պայմանագրի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև

բանակցություններ սկսելու վերաբերյալ:

Մայիսի 2-ից 5-ը Հայաստան-ԱՄՆ ռազմավարական երկխոսության ամփոփիչ նիստի շրջանակներում աշխատանքային այցով ԱՄՆ-ում է գտնվել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, որի ընթացքում ԱԳ նախարարը հանդիպումներ է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի, ԱՄՆ պետքարտուղարի քաղաքական հարցերով տեղակալ Վիկտորիա Նուլանդի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) կառավարիչ Սամանթա Փաուերի, Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (NDI) նախագահ Դերեկ Միտչելի, Միջազգային հանրապետական ինստիտուտի Եվրասիայի տարածաշրջանային տնօրեն Ստիվեն Նիքսի հետ և որպես հիմնական բանախոս մասնակցել է ամերիկյան հեղինակավոր «Atlantic Council» ուղեղային կենտրոնում անցկացված -քննարկմանը:

Հունիսի 18-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալ Քերընն Դոնֆրիդին: Վարչապետը կարևորել է հայ-ամերիկյան հարաբերությունների շարունակական զարգացումն ու ընդլայնումը և նշել, որ տիկին Դոնֆրիդի այցը ևս մեկ հնարավորություն է քննարկելու երկկողմ օրակարգային հարցերը:

Հունիսի 18-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալ Քերընն Դոնֆրիդին:

Հուլիսի 15-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության ղեկավար Ուիլյամ Բըրնսին: Զրուցակիցները քննարկել են միջազգային և տարածաշրջանային անվտանգությանը, ահաբեկչության դեմ պայքարին վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվել Հարավային Կովկասի տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին:

Սեպտեմբերի 18-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարությունում ընդունել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի գլխավորած պատվիրակությանը:

Սեպտեմբերի 19-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի միջնորդությամբ տեղի է ունեցել Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հանդիպումը, որի ընթացքում Արարատ Միրզոյանը ընդգծել է, որ ադրբեջանական զինված ուժերը պետք է դուրս բերվեն ՀՀ ինքինիշխան տարածքից, ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումն անընդունելի են, իսկ հետագա էսկալացիաների կանխարգելման նպատակով պետք է ներդրվեն միջազգային մեխանիզմներ: ՀՀ ԱԳ նախարարը կարևորել է հումանիտար խնդիրների, այդ թվում՝ ռազմագերիների հայրենադարձման շուտափույթ կարգավորումը

Սեպտեմբերի 21-ին ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակներում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԱՄՆ Միջազգային զարգացման

գործակալության (USAID) կառավարիչ Սամանթա Փաուերի հետ, որի ընթացքում կողմերը անդրադարձել են ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերին, մտքեր փոխանակել համատեղ նոր ծրագրերի իրականացման հեռանկարների շուրջ:

Սեպտեմբերի 22-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Նյու Յորքում՝ ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակում հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ:

Հոկտեմբերի 4-ին ամերիկյան կողմի նախաձեռնությամբ տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի, ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի և Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հեռախոսազրույցը, որի ընթացքում կողմերն իրենց կարծիքներն են ներկայացրել հոկտեմբերի 2-ին Ժնևում կայացած հանդիպման վերաբերյալ: Արարատ Միրզոյանը վերահաստատել է ՀՀ ինքնիշխան տարածքից ադրբեջանական ԶՈՒ դուրսբերման, Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների շուտափույթ հայրենադարձման ու հրադադարի ռեժիմի անվերապահ պահպանման անհրաժեշտությունը:

Նոյեմբերի 7-ին Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը և Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը հանդիպում են ունեցել ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում: Նախարարները հյուրընկալվել են Բլեր Հաուսում, որտեղ տեղի է ունեցել նաև համատեղ հանդիպում ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ:

Դեկտեմբերի 1-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ, Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական Ֆիլիպ Ռիքերին: Զրուցակիցները քննարկել են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին, այդ թվում՝ Ստեփանակերտի և Բաքվի միջև քննարկումների միջազգային մեխանիզմի ձևավորմանը վերաբերող հարցեր:

Դեկտեմբերի 7-ին Երևանում հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության հերթական նիստի շրջանակներում կայացել է պաշտպանական և անվտանգային հարցերով աշխատանքային խմբի հանդիպումը:

6. Եվրոպական Միություն

Հաշվետու տարին նշանավորվել է Եվրոպական միության մշտադիտարկման առաքելության տեղակայմամբ Հայաստանի արևելյան սահմաններին: Վերջինս տեղակայվել է **հոկտեմբերի 20-ին՝** երկու ամիս ժամկետով: Հայկական կողմը շարունակել է աշխատանքները ԵՄ դիտորդական ներկայությունը Հայաստանի սահմաններին հետագայում ևս ապահովելու ուղղությամբ:

Մայիսի 18-ին Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ Գործընկերության խորհրդի նիստը:

Ապրիլի 28-ին Երևանում կայացել է ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի նիստը:

Սեպտեմբերի 29-ից 30-ը Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի չորրորդ նիստը:

Մարտի 15-ին կայացել է ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող Մաքսային հարցերով ենթակոմիտեի 2-րդ նիստը:

Սեպտեմբերի 26-ին կայացել է ՀՀ-ԵՄ աշխարհագրական նշումների ենթակոմիտեի երկրորդ նիստը: **Նոյեմբերի 8-ին** Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ենթակոմիտեի նիստը:

Նոյեմբերի 7-ին Բրյուսելում տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ մարդու իրավունքների շուրջ երկխոսության 12-րդ նիստը: **Հուլիսի 14–ին** կայացել է նաև ՀՀ-ԵՄ հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի 8-րդ նիստը՝ առցանց ձևաչափով:

Փետրվարի 10-ին ուժի մեջ է մտել «Հորիզոն Եվրոպա» (Horizon Europe - the Framework Programme for Research and Innovation) ծրագրին Հայաստանի ասոցացման վերաբերյալ համաձայնագիրը:

Հոկտեմբերի 11-ին ստորագրվել է «Ստեղծագործ Եվրոպա» (2021-2027) ծրագրին Հայաստանի միանալու վերաբերյալ համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել **դեկտեմբերի 28-ին:**

Դեկտեմբերի 8-ին ՀՀ նախագահը ստորագրել է Հայաստանի Հանրապետության կողմից «Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին օրենքը: ԵՄ անդամ երկրներից ներկայումս համաձայնագիրը վավերացվել է Էստոնիայի, Լատվիայի, Ավստրիայի և Չեխիայի կողմից:

Ապրիլի 6-ին, մայիսի 22-ին և օգոստոսի 31-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Բրյուսել, որի շրջանակներում կայացել են ՀՀ վարչապետի ու Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի առանձնազրույցները և վերջինիս նախաձեռնությամբ եռակողմ հանդիպումներ ՀՀ վարչապետի ու Ադրբեջանի նախագահի միջև:

Ապրիլի 18-ին, ապրիլի 22-ին, օգոստոսի 30-ին և սեպտեմբերի 17-ին կայացել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջև հեռախոսազրույցները:

Սեպտեմբերի 23-ին ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Հոկտեմբերի 6-ին ՀՀ վարչապետը Պրահայում մասնակցել է Ֆրանսիայի նախագահի և Եվրոպական խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կայացած **«Եվրոպական քաղաքական համայնքի» առաջին հանդիպմանը**, որի շրջանակներում Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի նախաձեռնությամբ տեղի է ունեցել ՀՀ վարչապետի ու Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ քառակողմ հանդիպում:

Նոյեմբերի 19-ին Թունիսի Ջերբա քաղաքում անցկացվող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 18-րդ գագաթնաժողովի շրջանակներում կայացել է ՀՀ

վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Հաշվետու տարվա ընթացքում **9 անգամ** Հայաստան է այցելել Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը:

Մարտի 11-ին Անթալիայի դիվանագիտական համաժողովի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ժոզեպ Բոռելի հետ: Նախարարի և բարձր ներկայացուցչի միջև հանդիպում կայացել է նաև **մայիսի 18-ին** ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի 4-րդ նիստին մասնակցելու նպատակով Բրյուսել այցի շրջանակներում:

Նոյեմբերի 24-ից 25-ը կայացել է ԵՄ Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության Ռուսաստանի, Արևելյան գործընկերության, Կենտրոնական Ասիայի, տարածաշրջանային համագործակցության և ԵԱՀԿ հարցերով կառավարող տնօրեն Միխայել Զիբերթի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

Դեկտեմբերի 16-ից 17-ը կայացել է ԵՄ Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության և ճգնաժամային արձագանքման հարցերով գլխավոր քարտուղարի տեղակալ Շառլ Ֆրիզի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

Բարձր ներկայացուցչի և ԱԳԵԾ կողմից արվել են հայտարարություններ Հայաստանի դեմ Ադրբեջանի սեպտեմբերյան հարձակման, ԼՂ շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

Հոկտեմբերի 13-ին առցանց ձևաչափով տեղի է ունեցել ԱԼԳ ավագ պաշտոնյաների հերթական հանդիպումը:

Նոյեմբերի 15-ից 16-ը կայացել է Եվրոպական միության և ԵՄ անդամ երկրների ԱԼԳ հարցերով հատուկ բանագնացների պատվիրակության այցը Հայաստան:

Դեկտեմբերի 12-ին Բրյուսելում տեղի է ունեցել ԵՄ ԱԼԳ նախարարական հանդիպումը:

Հայկական կողմն աշխատանքներ է տարել մշակվող զեկույցներում, բանաձևերում, հայտարարություններում Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիան, 2020թ. զինադադարի հայտարարության դրույթների չկատարումը, Լաչինի միջանցքի արգելափակումը դատապարտող ձևակերպումների, ինչպես նաև ՀՀ համար կարևորություն ներկայացնող այլ հարցերի շուրջ հայանպաստ դիրքորոշումների ամրագրման, տարբեր նախաձեռնություններ իրականացնելու ուղղությամբ: **Մարտի 10-ին** ընդունվել է հրատապ բանաձև Լեռնային Ղարաբաղում մշակութային արժեքների ոչնչացման վերաբերյալ, արվել են մի շարք հայտարարություններ՝ տարբեր ձևաչափերով:

Փետրվարի 23-ից 24-ը Երևանում կայացել է ՀՀ-ԵՄ խորհրդարանական գործընկերության կոմիտեի նիստը:

Հուլիսի 21-ից 22-ը տարածաշրջանային այցի շրջանակներում Հայաստան է այցելել

Եվրոպական խորհրդարանի արտաքին հարցերով կոմիտեի նախագահ Դեյվիդ Մքալիսթերի (ԵԺԿ, Գերմանիա) գլխավորած և տարբեր քաղաքական խմբակցություններ ներկայացնող պատվիրակությունը:

Հոկտեմբերի 21-ից 22-ը կայացել է Եվրոպական խորհրդարանում Հայաստանի հարցերով մշտական զեկուցող Անդրեյ Կովաչևի (ԵԺԿ, Բուլղարիա) այցը Հայաստան:

Փետրվարի 21-ից 22-ը Երևանում տեղի են ունեցել «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի հանձնաժողովների և բյուրոյի նիստերը:

7. Հարևան երկրներ

2022թ. շարունակվել է փոխգործակցությունը Վրաստանի և Իրանի հետ, քայլեր են ձեռնարկվել խորացնելու հարաբերությունները ամենատարբեր ուղղություններով:

7.1 Վրաստան

Հաշվետու տարում հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունները շարունակել են զարգանալ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում: Տարվա ընթացքում տեղի են ունեցել մի շարք բարձրաստիճան փոխայցելություններ:

Հունվարի 7-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի հետ: Զրուցակիցները գոհունակություն են հայտնել հայ-վրացական հարաբերությունների զարգացման ուղղությամբ երկու երկրների կառավարությունների միջև առկա համագործակցությունից և քննարկել երկկողմ փոխգործակցությանը վերաբերող օրակարգային մի շարք հարցեր:

Ապրիլի 5-ին պաշտոնական երկօրյա այցով Հայաստանում է գտնվել Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպումներ են կայացել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի, վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, ինչպես նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Մայիսի 30-ին ՀՀ նախագահը երկօրյա պաշտոնական այցով ժամանել է Վրաստան: Վրաստանի նախագահի հետ հանդիպմանը երկուստեք ընդգծվել է, որ տարբեր ոլորտներում առկա է փոխգործակցության ընդլայնման մեծ ներուժ, այդ թվում առանձնացվել են տրանսպորտի, կապի, հաղորդակցության, ՏՏ ոլորտները:

Հունիսի 2-ին, հունիսի 13-ին և նոյեմբերի 16-ին ՀՀ և Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված միջոցառումներ են տեղի ունեցել ՀՀ-ում և Վրաստանում:

Հունիսի 18-ին Վրաստանի վարչապետը աշխատանքային այցով ժամանել է Հայաստան: Դիլիջան քաղաքում Նիկոլ Փաշինյանի և Իրակլի Ղարիբաշվիլի հանդիպմանը մտքեր են փոխանակվել տարածաշրջանային իրավիճակի և զարգացումների շուրջ: Կողմերը պայմանավորվել են շարունակել ակտիվ երկխոսությունը:

Օգոստոսի 19-ին Հայաստանի և Վրաստանի միջպետական սահմանի Բագրատաշեն-Սադախլո անցակետի տարածքում պաշտոնապես շահագործման է հանձնվել Դեբեդ գետի վրա կառուցված նոր կամուրջը:

Սեպտեմբերի 13-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի հետ: Նիկոլ Փաշինյանը մանրամասն ներկայացրել է Հայաստանի սուվերեն տարածքի նկատմամբ Ադրբեջանի կողմից ձեռնարկված ագրեսիայի հետևանքով ստեղծված իրավիճակը: Իրակլի Ղարիբաշվիլին կարևորել է տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանումը՝ հավելելով, որ Վրաստանը կներդնի բոլոր ջանքերը դրան նպաստելու համար:

Սեպտեմբերի 23-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակներում Նյու Յորքում հանդիպել է Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիին: ՀՀ վարչապետն անդրադարձել է Հայաստանի սուվերեն տարածքի նկատմամբ Ադրբեջանի կողմից ձեռնարկված ագրեսիայի հետևանքով ՀՀ տարածքների օկուպացիային և դրա հետևանքով ստեղծված իրավիճակին: Իրակլի Ղարիբաշվիլին կարևորել է տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանումը և վերահաստատել Վրաստանի պատրաստակամությունը՝ նպաստելու դրան:

Նոյեմբերի 16-ին տեղի է ունեցել Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Իրակլի Ղարիբաշվիլիի հետ: ՀՀ վարչապետը Վրաստանի գործընկերոջը տեղեկատվություն է փոխանցել **հոկտեմբերի 31-ին** Սոչիում տեղի ունեցած Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի առաջնորդների եռակողմ հանդիպման արդյունքների մասին:

Հաշվետու տարում շարունակվել են ակտիվ շփումները գերատեսչությունների ղեկավարների մակարդակով:

7.2 Իրանի Իսլամական Հանրապետություն

2022թ. հայ-իրանական առանձնահատուկ հարաբերությունները շարունակել են զարգանալ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ուղղություններով: Հաշվետու տարվա ընթացքում տեղի են ունեցել բարձրաստիճան մի շարք այցեր:

Հունվարի 3-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել ԻԻՀ նախագահ Էբրահիմ Ռայիսիի հետ: Զրուցակիցները ընդգծել են տնտեսական կապերի ամրապնդմանն ուղղված երկու երկրների կառավարությունների սերտ համագործակցության կարևորությունը:

Փետրվարի 19-ին Մյունխենի անվտանգության 58-րդ համաժողովի ընթացքում Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ: Հայաստանի և Իրանի ԱԳ նախարարներն ընդգծել են **«Պարսից ծոց-Սև ծով միջազգային տրանսպորտային միջանցքի ստեղծման մասին»** համաձայնագրի վերջնականացման և ստորագրման անհրաժեշտությունը՝ այս

համատեքստում կարևորելով փորձագետների՝ 6-րդ հանդիպման կազմակերպման նպատակով միասնական ջանքերի ներդրումը:

Հունիսի 1-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել ԻԻՀ նախագահի հետ, որի ընթացքում ԻԻՀ նախագահին տեղեկություններ են փոխանցվել **մայիսի 22-ին** Բրյուսելում Եվրոպական խորհրդի նախագահի և Ադրբեջանի նախագահի հետ կայացած եռակողմ հանդիպման վերաբերյալ:

Օգոստոսի 10-ին և **սեպտեմբերի 13-ին** ՀՀ վարչապետը հեռախոսազրույցներ է ունեցել ԻԻՀ նախագահի հետ: Քննարկվել են տարածաշրջանային զարգացումներին և անվտանգային մարտահրավերներին վերաբերող հարցեր: ՀՀ վարչապետը մանրամասներ է փոխանցել Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի սուվերեն տարածքի ուղղությամբ իրականացվող սադրիչ և ագրեսիվ գործողությունների վերաբերյալ: Իրանի նախագահը հայտնել է, որ Իրանը զգայուն է Կովկասյան տարածաշրջանում իր սահմանների հարցում և կիակազդի դրանք փոփոխելու ցանկացած փորձի: Է. Ռայիսին նշել է, որ Հարավային Կովկասի տարածաշրջանում նոր պատերազմն անընդունելի է, և Իրանն ուշադրությամբ հետևում է զարգացումներին: ԻԻՀ նախագահի խոսքով՝ տարածաշրջանում բոլոր հակամարտությունները պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով, Հայաստանի հետ Իրանի կապը չպետք է վտանգվի, իսկ հաղորդակցության ուղիները պետք է լինեն պետությունների սուվերենության ներքո:

Սեպտեմբերի 22-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Նյու Յորքում ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակներում հանդիպում է ունեցել ԻԻՀ նախագահ Էբրահիմ Ռայիսիի հետ: Նիկոլ Փաշինյանը մանրամասն անդրադարձել է Ադրբեջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ձեռնարկած լայնածավալ ագրեսիային և դրա հետևանքներին՝ ընդգծելով ադրբեջանական գործողությունների դատապարտման, ՀՀ սուվերեն տարածքից ադրբեջանական ստորաբաժանումների դուրսբերման ուղղությամբ միջազգային հանրության, այդ թվում՝ Իրանի համարժեք արձագանքի կարևորությունը: Նիկոլ Փաշինյանը գոհունակություն է հայտնել Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ձեռնարկած լայնածավալ ագրեսիայի վերաբերյալ իրանական կողմի հստակ գնահատականների կապակցությամբ և կարևորել ստեղծված իրավիճակում երկկողմ սերտ փոխգործակցությունը: Էբրահիմ Ռայիսին նշել է, որ իր երկիրը պատրաստ է աջակցել տարածաշրջանում խաղաղության հաստատմանը՝ հավելելով, որ Հայաստանի անվտանգության հարցը կարևոր է Իրանի համար:

Սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում ՄԱԿ ԳԱ 77-րդ նիստի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ: Վերջինս նշել է, որ Իրանն անթույլատրելի է համարում տարածաշրջանում սահմանների և աշխարհաքաղաքականության ցանկացած փոփոխություն:

Հոկտեմբերի 20-ից 22-ը տեղի է ունեցել ԻԻՀ ԱԳ նախարարի այցը ՀՀ, որի

շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ: Այցի շրջանակներում Արարատ Միրզոյանի և Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի մասնակցությամբ **հոկտեմբերի 21-ին** ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում տեղի է ունեցել ԻԻՀ գլխավոր հյուպատոսության բացման արարողությունը:

Նոյեմբերի 1-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարճատև աշխատանքային այց է կատարել ԻԻՀ: Հայաստանի և Իրանի առաջնորդների հանդիպմանը անդրադարձ է կատարվել առևտրատնտեսական կապերի ընդլայնման, առևտրաշրջանառության ծավալների շարունակական ավելացման հնարավորություններին: Ընդգծվել է այդ ծավալները տարեկան 3 մլրդ դոլարի հասցնելու անհրաժեշտությունը: Կողմերը քննարկել են նաև ենթակառուցվածքների զարգացման, էներգետիկայի, գյուղատնտեսության, շինարարության և այլ բնագավառներում համագործակցությանն առնչվող հարցեր: Կարևորվել է բեռնափոխադրումների դյուրացման համար համատեղ ծրագրերի իրականացումը, Հայաստան-Իրան երրորդ էլեկտրահաղորդման գծի շինարարությունն ավարտին հասցնելու անհրաժեշտությունը:

Նոյեմբերի 20-ին Թեհրանում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանի և ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Ալի Բաղերի Քանիի գլխավորությամբ կայացել են Հայաստանի և Իրանի ԱԳ նախարարությունների հերթական քաղաքական խորհրդակցությունները:

Հաշվետու տարում կայացել են նաև տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով հանդիպումներ, ինչպես նաև գիտաժողովային և շնորհանդեսային տարբեր միջոցառումներ են իրականացվել ՀՀ և ԻԻՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված:

7.3 Թուրքիայի Հանրապետություն

Երկու երկրների հարաբերությունները կարգավորելու նպատակով նշանակված հատուկ ներկայացուցիչները 2022թ. ընթացքում ունեցել են 4 հանդիպում (**2022թ. հունվարի 14, փետրվարի 24, մայիսի 3 և հուլիսի 1**):

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում փետրվարից վերականգնվել է երկու երկրների միջև ուղիղ ավիահաղորդակցությունը:

Մարտի 10-ից 12-ը թուրքական կողմի հրավերով ՀՀ ԱԳ նախարարը մասնակցել է Անթալիայի դիվանագիտական ֆորումին, որի շրջանակներում հանդիպել է Թուրքիայի ԱԳ նախարարի հետ:

Հուլիսի 1-ին Հայաստանի և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչները Վիեննայում կայացած չորրորդ հանդիպմանը պայմանավորվածություն են ձեռք բերել հնարավոր ամենասեղմ ժամկետներում ապահովել Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը

հատելու հնարավորություն համապատասխանաբար Հայաստան և Թուրքիա այցելող երրորդ երկրների քաղաքացիների համար և որոշել են սկսել այդ ուղղությամբ անհրաժեշտ գործընթացները: Նույն հանդիպման ընթացքում կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև հնարավոր ամենասեղմ ժամկետներում սկսել Հայաստան-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումների իրականացումը և այդ ուղղությամբ անհրաժեշտ գործընթացները:

Հուլիսի 11-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:

Հոկտեմբերի 6-ին Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակներում Պրահայում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԹՀ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանդիպումը:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում՝ **նոյեմբեր-դեկտեմբեր** ամիսներին, տեղի է ունեցել երկու երկրների միջգերատեսչական մասնագիտական խմբերի երկու հանդիպում:

8. Եվրասիական տարածաշրջանի երկրներ

2022թ. սեպտեմբերի 30-ին Երևանում տեղի է ունեցել Առևտրատնտեսական համագործակցության **հայ-բելառուսական** միջկառավարական համատեղ հանձնաժողովի հերթական՝ 16-րդ նիստը:

Հոկտեմբերի 20-ին Երևանում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Բելառուսի Հանրապետության վարչապետի հետ:

Հայաստանի և **Թուրքմենստանի** միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ Հայաստանի և Թուրքմենստանի բարձրաստիճան պաշտոնյաները փոխանակել են շնորհավորական ուղերձներ:

2022թ. սեպտեմբերի 13-ին Աշխաբադում տեղի է ունեցել Հայաստանի և Թուրքմենստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 9-րդ նիստը: Նույն օրը տեղի են ունեցել Հայաստանի և Թուրքմենստանի ԱԳ նախարարությունների միջև քաղաքական խորհրդատվություններ ԱԳ նախարարների տեղակալների մակարդակով:

Հայաստանի և **Ղազախստանի** միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման **30-ամյակի** կապակցությամբ Հայաստանի և Ղազախստանի բարձրաստիճան պաշտոնյաները փոխանակել են շնորհավորական ուղերձներ:

Հունիսի 15-ին Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Ղևոնդյանն իր հավատարմագրերը հանձնել է Ղազախստանի Հանրապետության նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևին:

Մայիսի 19-ից 20-ը Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության ԱԳ նախարարությունների իրավաբանական ծառայությունների միջև

կայացել են իրավապայմանագրային հենքի գույքագրման և կատարելագործման հարցերով խորհրդատվություններ:

Հոկտեմբերի 7-ին Հայաստանի և Ղազախստանի ԱԳ նախարարությունների միջև տեղի են ունեցել քաղաքական խորհրդատվություններ ԱԳ նախարարների տեղակալների մակարդակով:

Նոյեմբերի 4–ին Երևանում կայացել է Տնտեսական համագործակցության հայ-**ղրղզական** միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը:

Հայաստանի և **Մոլդովայի** միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ Հայաստանի և Մոլդովայի բարձրաստիճան պաշտոնյաները փոխանակել են շնորհավորական ուղերձներ:

Աշխատանքներն են տարվել հայ-մոլդովական առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի հնարավոր անցկացման ուղղությամբ:

Հայաստանի և **Տաջիկստանի** միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ Հայաստանի և Տաջիկստանի բարձրաստիճան պաշտոնյաները փոխանակել են շնորհավորական ուղերձներ:

ՀՀ հետ բարեկամական հարաբերությունների ամրապնդման և զարգացման, քաղաքական ու տնտեսական փոխգործակցության խորացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար 2014-2021թթ. Հայաստանում Տաջիկստանի դեսպան Իմոմուդդին Սատտորովը պարգևատրվել է Մխիթար Գոշ մեդալով:

2022թ. սեպտեմբերի 20-ին Դուշանբեում, տաջիկստանյան կողմի առաջարկությամբ, տեղի են ունեցել Հայաստանի և Տաջիկստանի ԱԳ նախարարությունների միջև քաղաքական խորհրդատվություններ:

Հայաստանի և **Ուկրաինայի** միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ Հայաստանի և Ուկրաինայի բարձրաստիճան պաշտոնյաները փոխանակել են ուղերձներ:

2022թ. փետրվարի 16-ին հեռավար ձևաչափով կայացել է Հայ-ուկրաինական գործարար խորհրդի անդրանիկ նիստը, որի ընթացքում ստորագրվել է դրա ստեղծման մասին համաձայնագիրը:

Նոյեմբերի 17-ից 21-ը Հայաստանում էին գտնվում Ուկրաինայում բնակվող հայազգի խոշոր գործարարներ, որոնք հետաքրքրված են Հայաստանում բիզնես գործունեություն ծավալելով տնտեսության մի շարք ոլորտներում, մասնավորապես՝ գյուղատնտեսություն, անասնաբուծություն, ՏՏ և այլն: Խումբը հանդիպումներ է ունեցել ՀՀ իշխանությունների հետ:

9. Եվրոպական երկրներ

Փետրվարի 4-ին Ֆրանսիայի նախագահ Մակրոնի և ԵՄ խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ և մասնակցությամբ տեղի է ունեցել Նիկոլ Փաշինյանի և Իլհամ Ալիևի հեռավար հանդիպումը:

Փետրվարի 7-ին Ֆրանսիական կառավարության և ԵՄ միջնորդությամբ ութ հայ ռազմագերիներ վերադարձել են հայրենիք:

Օգոստոսի 3-ին Ֆրանսիայի նախագահը հեռախոսազրույց է ունեցել ՀՀ վարչապետի և Ադրբեջանի նախագահի հետ, որի մասին Ելիսեյան պալատի մամուլի հաղորդագրությունում մասնավորապես նշվել է, որ նախագահ Մակրոնը մտահոգություն է հայտնել Լաչինի միջանցքի հատվածում տեղի ունեցած լուրջ միջադեպերի կապակցությամբ, կոչ է արել անել ամեն ինչ՝ էսկալացիայից խուսափելու և Հայաստանի հետ լիարժեք բանակցություններ ծավալելու համար, ընդգծել է 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարի պայմանավորվածությունների շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման կարևորությունը:

Սեպտեմբերի 15-ին Ֆրանսիայի նախագահությամբ տեղի է ունեցել ՄԱԿ ԱԽ արտահերթ հանդիպում:

Հոկտեմբերի 4-ին Ֆրանսիայի ԱԳ նախարար Կոլոննան ԱԺ-ում հնչած հարցին պատասխանել է, որ ռազմագերիների մահապատիժը միջազգային մարդասիրական իրավունքի խախտում է և ռազմական հանցագործություն: Նման դեպքերում անպատժելիություն լինել չի կարող: Ֆրանսիան համերաշխ է հայ ժողովրդի հետ: Կոչ է արել անհապաղ անաչառ և անկախ հետաքննություն սկսել՝ բացահայտելու այս գործողությունների մեղավորներին և երաշխավորելու, որ նրանք պատասխանատվության ենթարկվեն: Ֆրանսիան կոչ է արել ազատ արձակել դեռևս անազատության մեջ պահվող բոլոր հայ գերիներին:

Հոկտեմբերի 6-ին նախագահ Մակրոնի նախաձեռնությամբ ու մասնակցությամբ Պրահայում կայացել է Փաշինյան-Մակրոն-Շառլ Միշել-Ալիև քառակողմ հանդիպում:

Նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի Սենատը **295** կողմ և **1** դեմ ձայներով ընդունել է Հայաստանին աջակցող և Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ առաջարկող բանաձև:

Նոյեմբերի 30-ին Ֆրանսիայի ԱԺ միաձայն (**256** կողմ) ընդունել է Հայաստանին աջակցող և Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ առաջարկող բանաձև:

Դեկտեմբերի 27-ին Ֆրանսիայի տարբեր առանցքային կուսակցությունների քաղաքական առաջնորդներ, չնայած քաղաքական տարբերվող հայացքներին, համատեղ բաց նամակ են հրապարակել Ֆրանսիայում ամենամեծ լսարանն ունեցող «Մոնդ» («Le Monde») օրաթերթում՝ հայցելով Ֆրանսիայի նախագահի միջամտությունը՝ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության անվտանգությունը երաշխավորելու համար:

Հունվարի 21-ին կայացել է Ֆրանսիայի նախագահի դիվանագիտական խորհրդական Իզաբել Դյումոնի և ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բրիս Ռոքֆոյի այցը

Հայաստան: Այցի ընթացքում կայացել են հանդիպումներ ՀՀ վարչապետի և ԱԳ նախարարի հետ:

Մարտի 9-ին Փարիզում կայացել է Հայաստանի և Ֆրանսիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված «Հավակնություններ՝ Ֆրանսիա-Հայաստան» համաժողովը: Միջոցառման հիմնական նպատակն էր՝ ի մի բերել հայ-ֆրանսիական համագործակցության բոլոր դերակատարներին և փորձել համակարգված բնույթ հաղորդել վերջիններիս նախաձեռնություններին՝ դրանով մեծացնելով ընդհանուր գործունեության արդյունավետությունն ու տեսանելիությունը, ինչպես նաև հետամուտ լինելու **2021թ. դեկտեմբերի 9-ին** Փարիզում հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության համատեղ միջգերատեսչական նիստի արդյունքներով ստորագրված «**Հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության 2021-2026թթ. ճանապարհային քարտեզի»** դրույթների իրագործմանը:

Մարտի 18-ին կայացել է Հայաստանի և Ֆրանսիայի ԱԳ նախարարներ Արարատ Միրզոյանի և Ժան-Իվ Լը Դրիանի միջև հեռախոսազրույց:

Մայիսի 2-ից 6-ը կայացել է Ֆրանսիայի Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի պատվիրակության այցը Հայաստան: Այցի ընթացքում ֆրանսիական պատվիրակությանն ընդունելու են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն, ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը, Հայաստան-Ֆրանսիա բարեկամական խմբի անդամները: Պատվիրակությունն այցելել է Զինվորի տուն, Ցեղասպանության հուշահամալիր, Եռաբլուր:

Օգոստոսի 24-ին կայացել է Հայաստանի և Ֆրանսիայի ԱԳ նախարարների միջև հեռախոսազրույց:

Սեպտեմբերի 13-ին և 16-ին կայացել են Փաշինյան-Մակրոն հեռախոսազրույցները:

Սեպտեմբերի 13-ին տեղի է ունեցել ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հեռախոսազրույցը Ֆրանսիայի ԱԳ նախարարի հետ:

Սեպտեմբերի 15-ին Ֆրանսիայի նախագահությամբ տեղի է ունեցել ՄԱԿ ԱԽ արտահերթ հանդիպում:

Սեպտեմբերի 26-ին Ելիսեյան պալատում տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հանդիպումը: Երկու երկրների առաջնորդները ՋԼՄ ներկայացուցիչների համար հանդես են եկել հայտարարություններով:

Սեպտեմբերի 21-ից 28-ը Հայաստան է այցելել Ֆրանսիայի Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի պատվիրակությունը:

Հոկտեմբերի 10-ին կայացել է Ֆրանսիայի նախագահի դիվանագիտական խորհրդական Իզաբել Դյումոնի և ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բրիս Ռոքֆոյի այցը Հայաստան: Այցի ընթացքում կայացել են հանդիպումներ ՀՀ վարչապետի, փոխվարչապետի, պաշտպանության և ԱԳ նախարարների, Անվտանգության խորհրդի

քարտուղարի հետ:

Հոկտեմբերի 27-ից 30-ը կայացել է Ֆրանսիայի ԱԺ պատվիրակության այցը Հայաստան: Պատվիրակությանն ընդունել են ՀՀ վարչապետը, ԱԺ նախագահը, ԱԳ նախարարի տեղակալը, ՀՀ Ազգային ժողովի Հայաստան-Ֆրանսիա բարեկամական խմբի անդամները, մարդու իրավունքների պաշտպանը: Պատվիրակությունն այցելել է Եռաբլուր զինվորական պանթեոն, Զինվորի տուն, Սյունիքի մարզ:

Նոյեմբերի 11-ից 12-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը Ֆրանսիա: Այցի ընթացքում կայացել են հանդիպումներ Ֆրանսիայի ԱԳ նախարարի ու արտաքին առևտրի, տնտեսական գրավչության և արտերկրում բնակվող ֆրանսիացիների հարցերով լիազոր նախարարի հետ: Նախարար Միզոյանը մասնակցել է Փարիզի խաղաղության համաժողովին:

Մարտի 29-ին հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության չորրորդ համաժողովի նախապատրաստական աշխատանքային հանդիպմանը մասնակցելու համար Հայաստան էին ժամանել Լիոնի փոխքաղաքապետ Սոնյա Զդորովցոֆի գլխավորած պատվիրակությունը և Ֆրանսիայի ԱԳՆ ֆրանսիական տարածքային միավորների արտաքին հարցերի վարչության պետի տեղակալ Քսավիե դ՛Արգոևը: Ֆրանսիական կողմն ունեցել է նաև առանձին հանդիպումներ ՀՀ շահագրգիռ գերատեսչություններում: Լիոնի փոխքաղաքապետն այցելել է նաև Գեղարքունիք, Տավուշ, Սյունիք և Լոռի:

Մարտի 29-ին Երևանում կայացել է հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության չորրորդ համաժողովի նախապատրաստական աշխատանքային հանդիպումը՝ հայ և ֆրանսիացի դերակատարների մասնակցությամբ:

Մայիսի 26-ից 29-ին կայացել է Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոյի այցը Հայաստան:

Հոկտեմբերի 14-ին Շվեյցարիայի Ժնև կանտոնի և Հանրապետության Մեծ խորհուրդը ընդունել է «Հայաստանի գոյատևման համար» Շվեյցարական սոցիալիստական կուսակցության և Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության մի շարք անդամների կողմից համատեղ նախաձեռնած բանաձև: Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակին արձագանքել է նաև Շվեյցարիայի արտաքին հարաբերությունները դաշնային դեպարտամենտը:

Մայիսի 5-ին Բեռնում կայացել են Հայաստանի և Շվեյցարիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև քաղաքական խորհրդակցություններ:

Հոկտեմբերի 3-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Ժնևում հանդիպում է ունեցել Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի պետքարտուղար Լիվիա Լոյի հետ:

Հոկտեմբերի 13-ից 17-ը Հայաստան է այցելել Շվեյցարիայի խորհրդարանի պատվիրակությունը:

Դեկտեմբերի 1-ին ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը լեհական Լոձ քաղաքում հանդիպում է ունեցել Շվեյցարիայի

արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի պետքարտուղար Լիվիա Լոյի հետ:

Մարտի 18-ին անցկացվել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և **Նիդերլանդների** ԱԳ նախարարությունների միջև:

Ապրիլի 24-ին Հայաստան է ժամանել Նիդերլանդների խորհրդարանի անդամ, Քրիստոնեական միություն կուսակցության արտաքին քաղաքականության հարցերով խոսնակ Դոն Սեդեը, այցելել է Գորիս:

Ապրիլի 24-ին Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան մասնակցելու նպատակով Նիդերլանդներից Հայաստան է ժամանել Նիդերլանդների Բարեկեցության, առողջապահության և սպորտի պետքարտուղար Մարտեն ֆան Օյենը:

Մայիսի 10-ից 11-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետի պաշտոնական այցը Նիդերլանդներ, որի ընթացքում տեղի է ունեցել Նիդերլանդների վարչապետի հետ առանձնազրույց, այնուհետև՝ հանդիպում ընդլայնված կազմով: Վարչապետը հանդիպում է ունեցել Նիդերլանդների Սենատի նախագահ Անտոնի Բրյաունի և Ներկայացուցիչների պալատի նախագահ Վերա Բերգկամպի հետ, այնուհետև քննարկում է ունեցել խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամների հետ:

Հունիսի 17-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Նիդերլանդների Թագավորության ԱԳ նախարար Վոպկե Հուքստրայի հետ:

Հուլիսի 6-ին Նիդերլանդների խորհրդարանն ընդունել է բանաձև Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ:

Դեկտեմբերի 1-ին ԵԱՀԿ նախարարական 29-րդ համաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Նիդերլանդների Թագավորության ԱԳ նախարար Վոբկե Հուկստրայի հետ:

Դեկտեմբերի 14-ին Նիդերլանդների Թագավորության խորհրդարանը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունել է բանաձև, որով կոչ է անում կառավարությանը՝ հետամուտ լինել Եվրոպական խորհրդում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ ռազմական գործողությունները դադարեցնելու և Լաչինի միջանցքը բացելու վերաբերյալ Ադրբեջանին ուղղված համատեղ կոչով հանդես գալու հարցում:

Հունվարի 25-ից 26-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը **Լյուքսեմբուրգ:** Այցի ընթացքում կայացել են ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումները Լյուքսեմբուրգի ԱԳ և եվրոպական հարցերով նախարար Ժան Ասելբորնի և վարչապետ Քսավիե Բեթելի հետ, պատգամավորների պալատի նախագահի և խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամների հետ:

Սեպտեմբերի 23-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Նյու Յորքում՝ ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում, հանդիպում է ունեցել Լյուքսեմբուրգի վարչապետ Քսավյե Բեթելի հետ:

Մայիսի 20-ին Թուրինում ԵԽ 132-րդ նախարարական նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է **Նորվեգիայի** թագավորության

արտաքին գործերի նախարար Աննիկեն Հյուիթֆիլդի հետ:

Հունիսի 23-ից 24-ը Հայաստանի և Նորվեգիայի ԱԳ նախարարությունների միջև տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցությունների Օսլոյում:

Հոկտեմբերի 18-ին տեղի է ունեցել Նորվեգիայի ԱԳ նախարարի այցը Հայաստան, որի շրջանակներում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետի, ԱԺ նախագահի և ԱԳ նախարարի հետ:

Սեպտեմբերին Դանիան դեսպանություն է բացել Թբիլիսիում, և Վրաստանում Դանիայի դեսպանը 2023թ. հավատարմագրվել է նաև Հայաստանում:

Սեպտեմբերի 21-ին Նյու Յորքում ՄԱԿ Գլխավոր Ասամբելայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել **Ֆինլանդիայի** ԱԳ նախարար Պեկկա Հաավիստոյի և **Շվեդիայի** ԱԳ նախարար Անն Լինդեի հետ:

Հոկտեմբերի 6-ին Շվեդիայի Ռիկսդագի **Շվեդիա-Հայաստան** բարեկամական խումբը հայտարարություն է տարածել հայ ռազմագերիների արտադատական սպանությունների վերաբերյալ:

Փետրվարի 1-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել **Միացյալ Թագավորության** Եվրոպական հարևանության և Ամերիկայի հարցերով նախարար Քրիս Հիթն-Հարիսի հետ:

Մարտի 4-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել ՄԹ Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի հարցերով պետնախարար Ջեյմս Քլևերլիի հետ:

Մարտի 8-ին Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպան Վարուժան Ներսեսյանն իր հավատարմագրերն է հանձնել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության թագուհի, Նորին Մեծություն Եղիսաբեթ Երկրորդին:

Սեպտեմբերի 15-ին տեղի է ունեցել ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հեռախոսազրույցը ՄԹ արտաքին գործերի, համագործակցության և զարգացման նախարարության Եվրոպայի նախարար Լեո Դոհերթիի հետ:

Դեկտեմբերի 15-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Միացյալ Թագավորության արտաքին գործերի, համագործակցության և զարգացման նախարարության Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի, Հարավային Ասիայի և ՄԱԿ հարցերով պետնախարար լորդ Թարիք Ահմադի հետ:

Դեկտեմբերի 16-ին Հայաստան է ժամանել ՄԹ Գաղտնի հետախուզական ծառայության տնօրեն Ռիչարդ Մուրի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպումներ են կայացել ՀՀ վարչապետի, ԱԱԾ տնօրենի հետ:

Փետրվարի 18-ին Մյունխենի անվտանգության 58-րդ համաժողովի շրջանակում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել **Գերմանիայի** ԱԳ պետնախարար Տոբիաս Լինդների հետ:

Հունիսի 30-ից հուլիսի 1-ը տեղի է ունեցել ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարար Սվենյա Շուլցեի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան, որի շրջանակներում կայացել են հանդիպումներ ՀՀ վարչապետի, էկոնոմիկայի նախարարի հետ:

Հուլիսի 7-ին Բեռլինում տեղի է ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Գերմանիայի ԱԳՆ-ների միջև: Այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը հանդիպումներ է ունեցել Գերմանիայի դաշնային նախագահի գրասենյակի Միջազգային հարաբերությունների վարչության տնօրեն Վոլֆգանգ Զիլբերմաննի և Գերմանիայի դաշնային կանցլերի գրասենյակի Արտաքին և անվտանգության քաղաքականության վարչության պետի տեղակալ Քրիստիան Աուլբախի հետ:

Հոկտեմբերի 6-ին Պրահայում Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շուլցի հետ:

Հոկտեմբերի 7-ին Երևանում տեղի է ունեցել ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի հերթական խորհրդակցությունները՝ 2023թ. կայանալիք Ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հերթական նիստին ընդառաջ:

2022թ. ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունը որոշում է կայացրել Հայաստանը վերադարձնել 2030թ. բարեփոխումների ռազմավարության տրանսֆորմացիոն (երկկողմ) գործընկերների ցանկ:

Փետրվարի 2-ից 3-ը տեղի է ունեցել **Ավստրիայի Հանրապետության** եվրոպական և արտաքին գործերի դաշնային նախարար Ալեքսանդր Շալլենբերգի աշխատանքային այցը Հայաստան: Այցի ընթացքում կայացել են Ավստրիայի ԱԳ նախարարի հանդիպումները ՀՀ վարչապետի և ԱԳ նախարարի հետ:

Փետրվարի 2-ին կայացել է Երևանում Ավստրիական զարգացման գործակալության գրասենյակի պաշտոնական բացումը:

Փետրվարի 2-ին ՀՀ ԱԳ նախարարը և Ավստրիայի ԱԳ դաշնային նախարարը ստորագրել են Համատեղ հռչակագիր ԵՄ արևելյան գործընկեր պետությունների հետ 2022-2024թթ. Ավստրիական զարգացման համագործակցության շրջանակային ռազմավարության մասին:

Մարտի 11-ին Անթալիայի դիվանագիտական ֆորումի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ավստրիայի եվրոպական և արտաքին գործերի դաշնային նախարար Ալեքսանդր Շալենբերգի հետ:

Նոյեմբերի 8-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը ՄԱԿ-ի՝ Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 27-րդ համաժողովի

շրջանակում հանդիպում է ունեցել Ավստրիայի Հանրապետության դաշնային նախագահ Ալեքսանդր Վան Դեր Բելլենի հետ:

Սեպտեմբերի 20-ին ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ավստրիայի եվրոպական և արտաքին գործերի դաշնային նախարար Ալեքսանդր Շալլենբերգի հետ:

Մարտի 30-ին Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստանի և **Բելգիայի** արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև քաղաքական խորհրդակցություններ:

Սեպտեմբերի 19-ին աշխատանքային այցով Նյու Յորքում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Բելգիայի ԱԳ նախարար Հաջա Լահբիբի հետ:

Նոյեմբերի 17-ին Մոնակոյի արքայազն Ալբերտ 2-րդը, Մոնակոյի Իշխանապետության ազգային տոնի կապակցությամբ ունեցած իր ելույթում, համերաշխություն է հայտնել հայ ժողովրդին: Խոսելով ընդհանրապես աշխարհում առկա գլոբալ հիմնախնդիրներից, ճգնաժամային և պատերազմական իրավիճակներից, նա մասնավորապես նշել է. «Այսօր, ես մտքերով հատկապես հայ ժողովրդի կողքին եմ, որն արդեն իսկ բազմաթիվ զրկանքներ է կրել»:

Ապրիլի 2-ից 3-ին Իտալիայի ԱԳ նախարար Լուիջի Դի Մայոն աշխատանքային այց է կատարել Հայաստան:

Նոյեմբերի 30-ին Հռոմի Լա Սապիենցա համալսարանի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև ստորագրվել է համաձայնագիր՝ հայագիտության դասավանդման վերաբերյալ:

Հուլիսի 5-ից 7-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այց է կատարել **Իսպանիա:**

Հոկտեմբերի 6-ի լիագումար նիստում **Իսպանիայի** Կոնգրեսը միաձայն ընդունել է հայ ժողովրդին զորակցության հայտարարություն:

Նոյեմբերի 21-ին Մադրիդի Կոմպլուտենս համալսարանի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարության միջև ստորագրվել է համաձայնագիր՝ հայագիտության ամբիոնի ստեղծման մասին:

Օգոստոսին Իսպանիան դիվանագիտական ներկայացուցչություն է բացել Երևանում:

Իսպանիայի Կոնգրեսը **դեկտեմբերի 22-ին** կայացած լիագումար նիստի ընթացքում միաձայն ընդունել է հայտարարություն՝ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակման և դրա հետևանքով ստեղծված հումանիտար ճգնաժամի վերաբերյալ:

Հոկտեմբերի 25-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այց է կատարել **Սուրբ Աթոռ:**

Հոկտեմբերի 20-ին Լիսաբոնում կայացել են քաղաքական խորհրդակցություններ ՀՀ և **Պորտուգալիայի** արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև՝ վարչության պետերի մակարդակով:

Մայիսի 6-ին Վիլնյուսում տեղի են ունեցել Հայաստանի և **Լիտվայի** ԱԳՆ-ների միջև քաղաքական խորհրդակցություններ՝ նախարարի տեղակալների մակարդակով:

Մայիսի 19-ից 20-ը Լիտվայի Հանրապետության նախագահը պաշտոնական այցով գտնվել է Հայաստանում, հանդիպումներ ունեցել ՀՀ նախագահի, վարչապետի, ԱԺ նախագահի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Հոկտեմբերի 28-ին Վիլնյուսում կայացել է հայ-լիտվական միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը:

Դեկտեմբերի 1-ին՝ Լոռում ԵԱՀԿ նախարարական համաժողովի աշխատանքների շրջանակներում, ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Լիտվայի ԱԳ նախարար Գաբրիելիուս Լանդսբերգիսի հետ:

Մայիսի 24-ին Դավոսում տեղի է ունեցել Հայաստանի և **Լատվիայի** նախագահների հանդիպումը:

Հունիսի 14-ին Երևանում տեղի են ունեցել Հայաստանի և Լատվիայի ԱԳՆ-ների միջև քաղաքական խորհրդակցություններ՝ վարչության պետերի մակարդակով:

Դեկտեմբերի 1-ին Լոռում ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել **Էստոնիայի Հանրապետության** ԱԳ նախարար Ուրմաս Ռեինսալուի հետ:

Հունվարի 10-ին Լեհաստանի արտաքին գործերի նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Զբիգնև Ռաուն Ղազախստանում տիրող իրավիճակի վերաբերյալ հեռախոսազրույց է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարար, ՀԱՊԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի նախագահող Արարատ Միրզոյանի հետ և իր պատրաստակամությունը հայտնել որպես ԵԱՀԿ գործող նախագահ համագործակցելու

Ապրիլի 1-ին աշխատանքային այցով Երևանում է այցելել ԵԱՀԿ գործող նախագահ, Լեհաստանի ԱԳ նախարար Զբիգնև Ռաուն:

Մայիսի 24-ին Դավոսում ընթացող համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդիպել է Լեհաստանի Հանրապետության նախագահ Անջեյ Դուդայի հետ: Հանդիպման ընթացքում ստորագրվել է ՀՀ կենտրոնական բանկի և «Վարշավայի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ միջև համագործակցության մտադրությունների մասին հուշագիր:

Հունիսի 28-ին Երևանում ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը և Վարշավայի ֆոնդային բորսայի (ՎՖԲ) կառավարող խորհրդի նախագահ Մարեկ Դիետլը ստորագրել են Հայաստանի ֆոնդային բորսայի (ՀՖԲ) բաժնետոմսերի հսկիչ փաթեթի վաճառքի վերաբերյալ պայմանագիր:

Հունիսի 28-ին Երևանում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ արտաքին գործերի նախարարությունների միջև:

Հուլիսի 19-ին պաշտոնական այցով Լեհաստանում էր գտնվում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը: Այցի ընթացքում նախարար Արարատ Միրզոյանը հանդիպումներ է

ունեցել Լեհաստանի ԱԳ նախարար Զբիգնև Ռաուի, Սեյմի նախագահ Էլժբետա Վիտեկի, Սենատի նախագահ Տոմաշ Գրոձկիի, փոխվարչապետ Յացեկ Սաշինի հետ:

Սեպտեմբերի 19-ին ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակներում, ապա **դեկտեմբերի 1-ին** ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Լեհաստանի ԱԳ նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Զբիգնև Ռաուի հետ:

Նոյեմբերի 9-ից 11-ը Հայաստանում է գտնվել Լեհաստանի Հանրապետության Սենատի արտաքին հարաբերությունների և Եվրոպական միության հարցերով հանձնաժողովի նախագահ Բոգդան Կլիխը:

Չեխիայի նորակազմ խորհրդարանի Պատգամավորների պալատում ձևավորվել է Չեխիա-Հայաստան միջխորհրդարանական բարեկամության նոր խումբը. խմբի նախագահ է քվեարկությամբ վերընտրվել նախկին գումարման խորհրդարանում բարեկամության խմբի նախագահ Մարեկ Բենդան:

Մայիսի 17-ից 19-ը Չեխիայի Սենատի առաջին փոխնախագահ Յիրժի Ռուժիչկան այցելել է Հայաստան՝ գլխավորելով Սենատի մեդիայի հարցերով մշտական հանձնաժողովի պատվիրակությունը:

Մայիսի 20-ին Թուրինում կայացած ԵՄ նախարարների կոմիտեի **132-րդ** նիստի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է Չեխիայի ԱԳ նախարարի հետ:

Հուլիսի 26-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի պաշտոնական այցը Չեխիա: Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Չեխիայի ԱԳ նախարարի և Սենատի նախագահի հետ:

Սեպտեմբերի 29-ին և **հոկտեմբերի 6-ին** կայացել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Չեխիայի ԱԳ նախարարությունների միջև՝ վարչության պետերի մակարդակով:

Սեպտեմբեր 28-ից 29-ը կայացել է Վիշեգրադյան ֆոնդի տնօրեն Պետր Մարեշի այցը Երևան:

Հոկտեմբերի 6-ին Պրահայում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի հանդիպման շրջանակներում ՀՀ վարչապետը հանդիպել է Չեխիայի վարչապետ Պետր Ֆիալայի հետ:

Նոյեմբերի 30-ին Լոնդոնում ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Չեխիայի Հանրապետության ԱԳ նախարար Յան Լիպավսկիի հետ:

Սեպտեմբերի 29-ին ՀՀ նախագահին հավատարմագրերն է հանձնել ՀՀ-ում **Սլովակիայի** դեսպան Միրոսլավ Հացեկը:

Դեկտեմբերի 1-ին աշխատանքային այցով լեհական Լոնդոնում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Սլովակիայի ԱԳ նախարար Ռաստիսլավ Կաչերի հետ:

Դեկտեմբերի 1-ին Լոնդոնում ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել Հայաստանի և **Հունգարիայի** ԱԳ նախարարներ Արարատ Միրզոյանի և Պետեր Սիյարտոյի հանդիպումը, որի արդյունքում ընդունվել է հայտարարություն դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին:

Մարտի 11-ին ՀՀ նախագահի լիազորությունները կատարող Ալեն Սիմոնյանին իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ-ում **Սերբիայի** առաջին ռեզիդենտ դեսպան Տատյանա Պանայոտովիչ-Ցվետկովիչը:

Մայիսի 20-ին Թուրինում ԵԽ նախարարների կոմիտեի 132-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Սերբիայի ԱԳ նախարար Նիկոլա Սելակովիչի հետ:

Մայիսի 25-ին Դավոսի համաժողովի շրջանակներում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդիպում է ունեցել Սերբիայի նախագահ Ալեքսանդար Վուչիչի հետ:

Սեպտեմբերի 20-ին Նյու Յուրքում ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի աշխատանքների շրջանակում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Սերբիայի ԱԳ նախարար Նիկոլա Սելակովիչի հետ:

Հոկտեմբերի 15-ին իրականացվել է **«Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտությունից տուժած երեխաների հոգեբանական-սոցիալական վերականգնում»** ծրագիրը, որը իրականացվել է **Սլովենիայի** «Մարդու անվտանգության խթանում» (ITF) կազմակերպության կողմից և ֆինանսավորվել՝ Սլովենիայի կառավարության և ԵԱՀԿ-ում Ավստրիայի մշտական ներկայացուցչության կողմից:

Դեկտեմբերի 1-ին Լոնդոնում ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Սլովենիայի Հանրապետության փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Տանյա Ֆայոնի հետ:

Մայիսի 12-ին Պոդգորիցայում տեղի են ունեցել Հայաստանի և **Չեռնոգորիայի** ԱԳՆ-ների միջև քաղաքական խորհրդակցություններ՝ վարչության պետերի մակարդակով:

Մայիսի 26-ից 27-ը Չեռնոգորիայի նախագահը պաշտոնական այցով գտնվել է Հայաստանում, հանդիպումներ ունեցել ՀՀ նախագահի, վարչապետի և ԱԺ նախագահի հետ:

Հոկտեմբերի 21-ին Բոսնիայում և Հերցեգովինայում ՀՀ դեսպան Աշոտ Հովակիմյանը (նստավայրը՝ Պրահա) իր հավատարմագրերն է հանձնել **Բոսնիայի և Հերցեգովինայի** նախագահության նախագահող Շեֆիկ Ջաֆերովիչին:

Մայիսի 20-ին Թուրինում կայացած Եվրոպայի Խորհրդի **132-րդ** նախարարական նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպել է **Հյուսիսային Մակեդոնիայի** ԱԳ նախարար Բույար Օսմանիի հետ:

Սեպտեմբերի 15-ին Հյուսիսային Մակեդոնիայում ՀՀ դեսպան Եդիգարյանը հավատարմագրերն է հանձնել Հյուսիսային Մակեդոնիայի նախագահ Ստևո

Պենդարովսկիին:

Հոկտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ-ում Հյուսիսային Մակեդոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Կրում Եֆրեմովը /նստավայրը՝ Կիև/:

Դեկտեմբերի 1-ին ԵԱՀԿ 29-րդ նախարարական համաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Հյուսիսային Մակեդոնիայի ԱԳ նախարար Բույար Օսմանիի հետ:

Սեպտեմբերի 20-ին Նյու Յորքում գտնվող ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել **Կոսովոյի** փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դոնիկա Գյորվալա-Շվարցի հետ:

Սեպտեմբերի 13-ին Երևանում կայացել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և **Ռումինիայի** ԱԳ նախարարությունների միջև՝ նախարարի տեղակալների մակարդակով:

Դեկտեմբերի 1-ին ԵԱՀԿ նախարարական 29-րդ համաժողովի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Ռումինիայի ԱԳ նախարար Բոգդան Աուրեսկուին:

Մայիսի 27-ին Երևանում կայացել են քաղաքական խորհրդակցություններ՝ Հայաստանի և **Բուլղարիայի** ԱԳ նախարարությունների միջև՝ նախարարի տեղակալների մակարդակով:

Հունիսի 13-ից 15-ը կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի պաշտոնական այց Բուլղարիա:

Հոկտեմբերի 18-ից 21-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահի պետական այց Բուլղարիա: Ստորագրվել է համատեղ հռչակագիր:

Նոյեմբերի 18-ին Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովի **43-րդ** նստաշրջանի շրջանակներում Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Բուլղարիայի ԱԳ նախարար Նիկոլայ Միլկովի հետ:

Հունիսի 7-ին Ալբանիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանն Ալբանիայի Հանրապետության նախագահ Իլիր Մետային է հանձնել իր հավատարմագրերը:

Հուլիսի 22-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ-ում Ալբանիայի նորանշանակ դեսպան Լուելա Հայդարագան: Հայաստանում գտնվելու օրերին վերջինս հանդիպումներ է ունեցել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արմեն Արզումանյանի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի հետ:

Հունվարի 19-ին Հունաստանում ՀՀ դեսպան Տիգրան Մկրտչյանն իր հավատարմագրերն է հանձնել Հունաստանի նախագահ Կատերինա Սակելարոպուլուին:

Հունիսի 27-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը Հունաստան, որտեղ տեղի են ունեցել հանդիպումներ Հունաստանի նախագահ Կատերինա

Սակելլարոպուլուի, վարչապետ Կիրիակոս Միցոտակիսի և ԱԳ նախարար Նիկոս Դենդիասի հետ:

Սեպտեմբերի 27-ին Հայաստան է այցելել Հունաստանի ԱԳ նախարար Նիկոս Դենդիասը:

Հոկտեմբերի 6-ին Պրահայում Եվրոպական քաղաքական համայնքի հանդիպման շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսի հետ:

Հոկտեմբերի 28-ից 30-ը Հայաստան է այցելել Հունաստանի ԱԳ նախարարի սփյուռքի հարցերով պատասխանատու նախարարի տեղակալ Անդրեաս Կացանիոտիսը՝ մասնակցելու Գլոբալ հայկական գագաթնաժողովին:

Դեկտեմբերի 1-ին Լոնդոնում ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Հունաստանի ԱԳ նախարար Նիկոս Դենդիասի հետ:

Դեկտեմբերի 11-ից 15-ը Հունաստանի կրթության և կրոնական հարցերով փոխնախարար Անգելոս Սիրիգոսը մասնակցել է **«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 4-րդ գլոբալ ֆորումին:**

Հուլիսի 14-ին Կիպրոսում ՀՀ դեսպան Տիգրան Մկրտչյանն իր հավատարմագրերն է հանձնել Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադեսին:

Օգոստոսի 18-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Կիպրոսի ԱԳ նախարար Իոաննիս Կասուլիդեսի հետ:

Սեպտեմբերի 19-ին ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Կիպրոսի ԱԳ նախարար Իոաննիս Կասուլիդեսի հետ:

Նոյեմբերի 8-ին ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնվենցիայի կողմերի 27-րդ համաժողովի շրջանակում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդիպում է ունեցել Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսի հետ: Հանդիպումից հետո ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Կիպրոսի Հանրապետության միջև Շրջակա միջավայրի պահպանման բնագավառում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիր:

Նոյեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ-ում Կիպրոսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Կիպրոս Յորգալիսը /նստավայրը՝ Մոսկվա/:

2022թ. սեպտեմբերի 19-ին Նյու Յորքում ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակներում տեղի է ունեցել եռակողմ հանդիպում՝ Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի, Կիպրոսի ԱԳ նախարար Իոաննիս Կասուլիդիսի և Հունաստանի ԱԳ նախարար Նիկոս Դենդիասի միջև:

2022թ. ընթացքում կայացել է Հայաստանի, Կիպրոսի և Հունաստանի միջև սփյուռքի հարցերի շուրջ համագործակցության երկու եռակողմ հանդիպում՝ **հունիսի 24-ին**

Հունաստանի Պատրաս քաղաքում և **հոկտեմբերի 28-ին՝** Երևանում:

Հունաստանում կայացած հանդիպման ավարտին ստորագրվել է Սփյուռքի հարցերի շուրջ համագործակցության վերաբերյալ **Փոխըմբռնման հուշագիր՝** ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի, Կիպրոսի նախագահի հանձնակատարի գրասենյակի և Հունաստանի ԱԳՆ միջև:

10. Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ

2022թ. Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ աշխատանքները շարունակվել են:

Հայաստան-Հնդկաստան հարաբերությունները հաշվետու տարվա ընթացքում արձանագրել են էական առաջընթաց և զարգացում: Հնդկաստանը քաղաքական աջակցություն է ցուցաբերել Հայաստանին՝ ԱԳ նախարարության խոսնակի ու ՄԱԿ-ում մշտական ներկայացուցչի հայտարարությունների մակարդակով, դատապարտելով Ադրբեջանի կողմից **սեպտեմբերի 13-ին** սկսած ագրեսիան և պահանջելով դուրս բերել ադրբեջանական զորքերը Հայաստանի գրավված տարածքից, ինչպես նաև Լաչինի միջանցքի Ադրբեջանի կողմից շրջափակման հարցերում՝ կոչ անելով անհապաղ բացել միջանցքի ազատ գործունեությունը:

Շարունակվել է Հայաստանի և Հնդկաստանի միջև քաղաքական երկխոսությունը: Հնդկական կողմի հետ **2022թ. փետրվարի 18-ին** անցկացվել են արտաքին գործերի նախարարությունների միջև քաղաքական խորհրդակցություններ՝ նախարարի տեղակալների մակարդակով:

Հնդկական կողմի հրավերով **ապրիլի 25-ից 27-ը** Հնդկաստան է այցելել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը՝ մասնակցելու «Ռաիսինա» երկխոսություն միջազգային համաժողովին: Այցի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումը Հնդկաստանի ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի հետ: Պատվիրակության մաս են կազմել նաև գործարար բնագավառի 30-ից ավել ներկայացուցիչներ:

Հուլիսի 3-ից 5-ը կայացել է Հնդկաստանի ԱԳՆ արևմտյան ուղղության քարտուղար Սանջայ Վերմայի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան՝ առևտրի, տնտեսական, տեխնոլոգիաների, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի 8-րդ նիստի անցկացման կապակցությամբ: Այցի շրջանակներում կայացել է քարտուղար Վերմայի հանդիպումը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ: Կողմերը քննարկել են երկկողմ համագործակցության, տարածաշրջանային տրանսպորտային հաղորդակցության ծրագրերի իրականացման, մասնավորապես՝ «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի նախագծի, Չաբահար նավահանգստի, ինչպես նաև «Պարսից ծոց-Սև ծով» միջազգային տրանսպորտային միջանցքի շրջանակներում

համագործակցության հեռանկարները: Անդրադարձ է կատարվել նաև տարածաշրջանային և միջազգային անվտանգության հարցերի:

Հուլիսի 4-ին Երևանում տեղի է ունեցել առևտրի, տնտեսական, տեխնոլոգիաների, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի 8-րդ նիստը՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Հնդկաստանի Հանրապետության ԱԳՆ Արևմտյան ուղղության քարտուղար Սանջայ Վերմայի համանախագահությամբ: Հայկական կողմից նիստին մասնակցում էին նաև Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, առողջապահության, էկոնոմիկայի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, արտակարգ իրավիճակների նախարարների տեղակալները: Նիստի ընթացքում կողմերը մանրամասնորեն քննարկել են էկոնոմիկայի, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների, առողջապահության, կրթության, մշակույթի, տրանսպորտի, ենթակառուցվածքների ու համայնքների զարգացման, արտակարգ իրավիճակների հաղթահարման ոլորտներում համագործակցության հետագա խորացման ուղիները և պայմանավորվածություններ ձեռք բերել հետագա աշխատանքների շուրջ:

Նիստի ավարտին Արարատ Միրզոյանը և Սանջայ Վերման ստորագրել են հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի 8-րդ նիստի արձանագրությունը:

Հուլիսի 23-ից 27-ը տեղի է ունեցել ՀՀ պաշտոնական պատվիրակության այցը Հնդկաստան: Պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալը, ԱԳ նախարարի տեղակալը, ֆինանսների նախարարի տեղակալը և ՀՀ ՊՆ պաշտոնյաներ:

Հուլիսի 13-ին Հայաստանի ազգային կինոկենտրոնի և Հնդկական առևտրատնտեսական կազմակերպության միջև ստորագրվել է կինոոլորտի զարգացման և այդ բնագավառում հայ-հնդկական առարկայական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը:

Օգոստոսի 31-ին նշվել է Հայաստանի և Հնդկաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա տարելիցը, փոխանակվել են շնորհավորական ուղերձներ երկու երկրների ղեկավարների միջև:

Հոկտեմբերի 18-ից 22-ը Հնդկաստանի Գուջարաթ նահանգի Գանդհինագար քաղաքում կայացել է DefExpo-2022 ցուցահանդեսը, որի շրջանակներում կազմակերպվել է ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած ՀՀ պատվիրակության այցը Հնդկաստան և նրա հանդիպումը Հնդկաստանի պաշտպանության նախարարի հետ:

Նոյեմբերի 27-ից 29-ին Երևանում Հայաստանի և Հնդկաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում ՀՀ ԱԳ նախարարությունը, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հետ համատեղ, կազմակերպել է **«Հայաստան-Հնդկաստան. հազարամյա հարաբերությունների նոր խթաններ»** խորագրով առաջին միջազգային գիտաժողովը:

Դեկտեմբերի 14-ին աշխատանքային այցով Նյու Յորքում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Հնդկաստանի ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի հետ: Զրուցակիցները քննարկել են Հայաստանի և Հնդկաստանի միջև համագործակցության հետագա խորացմանը վերաբերող հարցեր և գոհունակություն են հայտնել հայ-հնդկական հարաբերությունների զարգացման դինամիկայի առնչությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև տարածաշրջանային անվտանգության հարցեր:

Հայաստան-Չինաստան հարաբերությունները պայմանավորված են եղել Չինաստանում COVID-19 համավարակի դեմ տարվող միջոցառումների պատճառով առաջացած սահմանափակումների քաղաքականությամբ, որոնք դժվարացրել են ուղիղ փոխայցելությունները և փոխանակումները երկու երկրների միջև՝ ազդելով նաև տարբեր բնագավառներում երկկողմ օրակարգի իրականացման վրա:

2022թ. ապրիլին անցկացվել են հայ-չինական դիվանագիտական հարաբերությունների հաստատման **30-ամյակի** առթիվ միջոցառումներ:

Ապրիլի 14-ին անցկացվել է ՉԺՀ Հասարակական գիտությունների ակադեմիայի Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի համատեղ կազմակերպված առցանց գիտաժողով:

Մայիսին կազմակերպվել է ՀՀ դեսպանի այց չինական **«Hisense International»** ընկերության կենտրոնակայան Ցինդաոյում, Հայաստանում B2B գործունեություն ծավալելու և գրասենյակ բացելու հեռանկարների քննարկում:

ԱԳՆ աջակցությամբ **հուլիսի 15-ին** կայացել է Հայաստանի «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (ՆԱԿ՝ «Էնթերփրայզ Արմենիա») և Արտերկրում ձեռնարկությունների զարգացման չինական ասոցիացիայի (Chinese Overseas Development Association՝ CODA) կողմից համատեղ կազմակերպված առցանց միջոցառումը:

Հայաստան-Ճապոնիա հարաբերությունները **2022թ.** ընթացքում դրական դինամիկա են արձանագրել: **Մայիսի 1-ից 2-ին** տեղի է ունեցել Ճապոնիայի արտաքին գործերի խորհրդարանական փոխնախարար Հոնդայի այցը Հայաստան, անցկացվել են հանդիպումներ ՀՀ ԱԺ-ում և ԱԳՆ-ում:

Սեպտեմբերի 2-ից 3-ը Հայաստան է այցելել Ճապոնիայի Ներքին գործերի և հաղորդակցությունների փոխնախարար Յոշիդա Հիրոշիի գլխավորած պատվիրակությունը:

Սեպտեմբերի 20-ին ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ճապոնիայի ԱԳ նախարար Յոշիմասա Հայաշիի հետ: Քննարկվել են երկկողմ հայ-ճապոնական առևտրատնտեսական կապերի ոլորտում առկա մեծ ներուժն առավել արդյունավետ օգտագործելու, ինչպես նաև ներդրումների խթանման հարցերը:

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) ներկայացուցիչների հետ **2022թ. սեպտեմբերին** կայացած հանդիպումներում փոխանցվել է

ՀՀ կառավարության հանձնառությունը՝ թվային և բարձր տեխնոլոգիաների բնագավառներում Ճապոնիայի հետ համատեղ ծրագրեր իրականացնելու կապակցությամբ:

11. Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրներ

Նպատակամղված աշխատանքներ են տարվել Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրների հետ համագործակցության զարգացման ուղղությամբ: Հատկապես ուշադրության կենտրոնում են եղել տարբեր ոլորտներում երկկողմ հարաբերությունների ամրապնդումն ու ընդլայնումը, առևտրաշրջանառության ծավալների մեծացումը, տեղի հայ համայնքների անվտանգային և ինքնության պահպանման խնդիրները, ՀՀ տնտեսության մեջ Ծոցի արաբական երկրներից հնարավոր ներդրումների գրավումը, տարածաշրջանի երկրներից զբոսաշրջային հոսքերի ավելացումը, տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացները և Հայաստանի համար դրանցից եկող անվտանգային հնարավոր սպառնալիքների գնահատումը, միջազգային կազմակերպություններում համագործակցության խորացումը և այլն:

Կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի **հունիսի 13-ից 14-ը** այցը **Կատարի** պետություն, որտեղ նա հանդիպումներ է ունեցել և ձեռք բերված պայմանավորվածությունները Կատարի ղեկավարության և բարձրաստիճան պաշտոնյաների հետ, այդ թվում՝ Կատարի էմիրի, հայր էմիրի, վարչապետի, փոխվարչապետերի, ներդրումային գործակալության տնօրենի, Կատարի գործարարների խորհրդի ղեկավար կազմի հետ: Այցի ընթացքում ստորագրվել է համագործակցության 7 փաստաթուղթ առողջապահության, զբոսաշրջության, արտգործնախարարությունների միջև խորհրդակցությունների անցկացման, լրատվության, կրթության և գիտության, միջհամալսարանական ոլորտներում:

Հունվարի 16-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանն աշխատանքային այց է կատարել **ԱՄԷ**: Նա Աբու Դաբիում հանդիպել է «Մասդար» ընկերության գլխավոր գործադիր տնօրենի հետ:

Նոյեմբերի 7-ից 9-ը Եգիպտոսում կայացած COP27 բարձր հատվածի շրջանակներում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդիպումներ է ունեցել **Լիբանանի** վարչապետի, **Իրաքի** նախագահի, Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղարի հետ:

Տարվա ընթացքում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը բազմակողմ հարթակներում հանդիպումներ է ունեցել **Սաուդյան Արաբիայի** (փետրվար, Մյունխենի անվտանգության համաժողով), **Եգիպտոսի, Հորդանանի, Սիրիայի** (սեպտեմբեր, Նյու Յորք, ՄԱԿ ԳԱ), Բենինի (նոյեմբեր, Թունիս, ՖՄԿ) ԱԳ նախարարների հետ:

Հուլիսի 11-ին Հայաստան է այցելել **Ռուանդայի** ԱԳ նախարարը:

Մարտի 28-ից 31-ը ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այց է կատարել Դուբայ և մասնակցել «Ամենամյա ներդրումային համաժողով-2022» միջոցառմանը, ինչպես նաև «Էքսպո 2020-Դուբայ»

համաշխարհային ցուցահանդեսի փակման արարողությանը: Նա հանդիպել է ԱՄԷ էկոնոմիկայի նախարարին:

Մայիսի 14-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն Աբու Դաբիում հանդիպել է ԱՄԷ արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարարի հետ:

Հայոց ցեղասպանության հիշատակի միջոցառումներին մասնակցել են **Սիրիայի և Իսրայելի՝** Հայաստանի հետ բարեկամության խմբերի խորհրդարանական պատվիրակությունները: **Ապրիլին** Հայաստան է այցելել նաև **Հորդանանի** Սենատի Հորդանան-Հայաստան բարեկամության խմբի, իսկ **օգոստոսին՝ Իրաքի** խորհրդարանի ազգային փոքրամասնությունները ներկայացնող պատվիրակությունը:

Հունիսի 9-ից 12-ը տեղի է ունեցել **Եգիպտոսի** ԱԳՆ ենթակայությամբ գործող Զարգացման համար գործընկերության եգիպտական գործակալության գլխավոր քարտուղարի այցը Հայաստան, որի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել շարունակելու և ընդլայնելու համապատասխան ոլորտներում ՀՀ և գործակալության միջև համագործակցությունը:

Դեկտեմբերի 4-ից 5-ը Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի 6-րդ նախարարական հանդիպմանը մասնակցելու նպատակով Իրաքում գտնվող ԱԳ փոխնախարար Վահե Գևորգյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել Իրաքի նախագահի և ԱԳ նախարարի հետ:

Տարվա ընթացքում ԱՄԷ են այցելել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարները և հանդիպումներ ունեցել էմիրաթցի գործընկերների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև տնտեսության տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնման և զարգացման հետ կապված տարբեր հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում Երևանում տեղի են ունեցել հայ-եգիպտական **(հուլիս)** և հայ-իսրայելական **(նոյեմբեր)** քաղաքական խորհրդակցությունները:

Հայաստանի 9-ը ընկերություններ **մարտին** մասնակցել են Դոհայի միջազգային ագրոարդյունաբերական AgriteQ ցուցահանդեսին: Ցուցահանդեսին մասնակցել է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարը, ով հանդիպումներ է ունեցել Կատարի ներդրումային գործակալության գործադիր տնօրենի և առևտրաարդյունաբերական պալատի նախագահի հետ:

Գործարար հանդիպումներ են կայացել ՀՀ և Սիրիայի **(հոկտեմբեր)** ու Իրաքյան Քուրդիստանի **(մայիս)** գործարարների միջև:

Իրաքյան Քուրդիստանից Հայաստան են այցելել մշակույթի նախարարը, ԱԳ փոխնախարարը, ԻՔ ականազերծման գործակալության պատվիրակությունը: ԻՔ ԱԳՆ երիտասարդ դիվանագետները ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցում մասնակցել են վերապատրաստման դասընթացի:

Ավարտին է հասցվել **«ՀՀ սովորական անձնագրեր կրող քաղաքացիների համար ԱՄԷ մուտքի արտոնագրի չեղարկման մասին»** համաձայնագրի համաձայնեցումը, և այն պատրաստ է ստորագրման:

Տարածաշրջանի երկրների հետ **հունվար-նոյեմբեր** ամիսների առևտրաշրջանառության ընդհանուր ծավալը կազմել է **շուրջ 840 մլն** ԱՄՆ դոլար, ինչը մոտ 128 տոկոսով ավելի է անցյալ ամբողջ տարվա առևտրի ծավալից: Ուշադրության է արժանի հատկապես այն փաստը, որ արտահանումը Հայաստանից կազմել է մոտ 730 մլն դոլար, այսինքն՝ առևտրաշրջանառության գրեթե 87 տոկոսը:

Տարվա ընթացքում ՀՀ նախագահին իրենց հավատարմագրերն են հանձնել Սիրիայի, Թունիսի, Իսրայելի, Բենինի, Եգիպտոսի, Ալժիրի, Մավրիտանիայի նորանշանակ դեսպանները:

12. Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրներ

Հաշվետու տարվա ընթացքում պահպանվել է **Կանադայի** հետ ակտիվ երկխոսությունը, տեղի են ունեցել պաշտոնական փոխայցելություններ, աշխատանքային խմբերի հանդիպումներ, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության և Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ագրեսիայի, Լաչինի միջանցքի արգելափակման և մարդասիրական աղետի առաջացման կապակցությամբ տեղի են ունեցել մի շարք հեռախոսազրույցներ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույցներ է ունեցել Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոյի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ:

ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույցներ է ունեցել Կանադայի ԱԳ նախարար Մելանի Ժոլիի, ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալ Քերընն Դոնֆրիդի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) կառավարիչ Սամանթա Փաուերի և ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ, Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական Ֆիլիպ Ռիքերի հետ:)

Հունվարի 31-ին Հայաստանը և Կանադան նշել են դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը:

Փետրվարի 19-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Կանադայի ԱԳ նախարար Մելանի Ժոլիի հետ, որի ընթացքում կողմերը երկուստեք պատրաստակամություն են հայտնել գործնական քայլեր ձեռնարկելու հայ-կանադական հարաբերությունների դրական դինամիկան ամրապնդելու ուղղությամբ:

Փետրվարի 25-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է Եվրոպայում և Եվրոպական Միությունում Կանադայի հատուկ բանագնաց Ստեֆան Դիոնին: Հանդիպման ընթացքում Ստեֆան Դիոնը նշել է, որ Հայաստանը շարժվում է ժողովրդավարական բարեփոխումների կարևոր ուղիով և ընդգծել, որ իր առաքելության հիմնական նպատակը Կանադայի կողմից Հայաստանի ժողովրդավարական գործընթացին աջակցությունն է:

Փետրվարի 28-ին Ժնևում ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի բարձրաստիճան նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Կանադայի ԱԳ նախարար Մելանի Ժոլիի հետ:

Մարտի 1-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Կանադայի հատուկ բանագնաց Ստեֆան Դիոնին: Զրուցակիցները քննարկել են Հայաստանում ժողովրդավարության հզորացմանը և այդ համատեքստում հայ-կանադական գործընկերության ընդլայնմանը վերաբերող հարցեր:

Սեպտեմբերի 21-ին Օտտավայում տեղի են ունեցել քաղաքական առաջին խորհրդակցությունները Հայաստանի Հանրապետության և Կանադայի արտաքին գերատեսչությունների միջև: Հայկական կողմը ներկայացրել է Հայաստանի ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը, կանադականը՝ ԱԳ նախարարի փոխտեղակալ Սանդրա ՄկՔարդելը:

Նոյեմբերի 19-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Թունիսի Ջերբա քաղաքում անցկացվող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 18-րդ գագաթնաժողովի շրջանակում հանդիպում է ունեցել Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոյի հետ: Զրուցակիցները քննարկել են հայ-կանադական հարաբերությունների հետագա զարգացմանն առնչվող տարբեր հարցեր:

Դեկտեմբերի 1-ին ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Կանադայի ԱԳ նախարար Մելանի Ժոլիին:

Ապրիլի 11-ին ՀՀ-ում **Դոմինիկյան Հանրապետության** նորանշանակ դեսպան Ֆրանկ Հանս Դանենբերգ Կաստելյանոսը (նստավայրը՝ Մոսկվա) իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին:

Հուլիսի 6-ին համատեղության կարգով Դոմինիկյան Հանրապետությունում ՀՀ դեսպան Անահիտ Հարությունյանը (նստավայրը՝ ք. Օտտավա) իր հավատարմագրերն է հանձնել այդ երկրի նախագահ Լուիս Ռոդոլֆո Աբինադեր Կորոնային:

Օգոստոսի 15-ից 20-ը արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև քաղաքական խորհրդակցությունների անցկացման նպատակով **Արգենտինա** և **Ուրուգվայ** է այցելել ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանի գլխավորած պատվիրակությունը: Այցի շրջանակներում քննարկվել է երկկողմ հարաբերությունների զարգացմանն առնչվող հարցերի լայն շրջանակ, ստորագրվել է **«Հայաստանի Հանրապետության և Ուրուգվայի Արևելյան Հանրապետության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների դիվանագիտական, հյուպատոսական, վարչական և տեխնիկական անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացնելու մասին»** համաձայնագիրը: Պարույր Հովհաննիսյանը ուրուգվայցի գործընկերոջը փոխանցել է Մոնտեվիդեոյում Հայաստանի ռեզիդենտ դեսպանություն բացելու վերաբերյալ ԱԳՆ հայտագիրը՝ փոխադարձելով ուրուգվայական կողմի՝ **2021-ին** կայացրած նման որոշմանը:

Սեպտեմբերի 1-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ-ում **Բրազիլիայի Դաշնային Հանրապետության** նորանշանակ դեսպան Ֆաբիո Վազ Պիտալուգան:

ՄԱԿ Գլխավոր ասամբելայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում **սեպտեմբերի 21-ին** ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Նյու Յորքում հանդիպում է ունեցել **Նիկարագուայի** արտաքին հարաբերությունների նախարար Դենիս Մոնկադայի, իսկ **սեպտեմբերի 23-ին**՝ Դոմինիկյան Հանրապետության արտաքին հարաբերությունների նախարար Ռոբերտո Ալվարեսի հետ:

Նոյեմբերի 1-ից Երևանում սկսել է գործել **Դոմինիկյան Հանրապետության** դիվանագիտական ներկայացուցչությունը:

Նոյեմբերի 25-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին հավատարմագրերն է հանձնել ՀՀ-ում **Ուրուգվայի Արևելյան Հանրապետության** նորանշանակ դեսպան Էդուարդո Ռոսենբրոկ Բիդարտը:

Նոյեմբերի 29-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել **Էկվադորի Հանրապետության** նորանշանակ դեսպան Խուան Ֆերնանդո Օլգին Ֆլորեսը (նստավայրը՝ Մոսկվա):

Նոյեմբերի 30-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում **Չիլիի** նորանշանակ դեսպան Էդուարդո Էսկոբարը (նստավայրը՝ Մոսկվա):

Դեկտեմբերի 6-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում **Նիկարագուայի** նորանշանակ դեսպան Ալբա Ասուսենա Տոռես Մեխիան (նստավայրը՝ Մոսկվա):

13. Միջազգային բազմակողմ համագործակցություն

13.1 Միավորված ազգերի կազմակերպություն

2022թ. ԱԳՆ շարունակել է ակտիվորեն ներգրավված լինել Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում իրականացվող աշխատանքներում: Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ ագրեսիվ ռազմական գործողություններն ու սադրանքները, իրավիճակը Լեռնային Ղարաբաղում, այդ թվում՝ Լաչինի միջանցքի շրջափակումը, գտնվել են միջազգային ասպարեզում իրականացվող աշխատանքների կենտրոնում:

2022թ. ընթացքում Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից ագրեսիվ գործողությունների, հայ-ադրբեջանական սահմանին Ադրբեջանի կողմից ռազմական սադրանքների և այլ առնչվող հարցերով ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում, ինչպես և Անվտանգության խորհրդում շրջանառվել են տասնյակ փաստաթղթեր՝ ՄԱԿ անդամ պետություններին ներկայացնելով ԼՂ հակամարտության վերաբերյալ ՀՀ դիրքորոշումները,

տեղեկացնելով Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի անվտանգությանը սպառնացող վտանգների, Ադրբեջանի շարունակական սադրանքների մասին:
Հաշվետու տարվա ընթացքում Հայաստանը համահեղինակել է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 39 բանաձև, ակտիվ ներգրավված է եղել ՄԱԿ կոմիտեների աշխատանքներում:

Ապրիլի 13-ին ՄԱԿ Տնտեսական և սոցիալական խորհրդի նիստի ընթացքում կայացած ընտրությունների արդյունքում Հայաստանն ընտրվել է ՄԱԿ ոչ կառավարական կազմակերպությունների կոմիտեի անդամ **2023-2026թթ.** ժամանակահատվածի համար:

Հուլիսի 20-ին ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանը ելույթ է ունեցել ՄԱԿ տնտեսական և սոցիալական խորհրդի հովանու ներքո անցկացվող Կայուն զարգացման բարձր մակարդակի քաղաքական ֆորումին՝ ընդգծելով ՀՀ հանձնառությունը 2030 օրակարգի նպատակներին և թիրախներին:

Հուլիսի 26-ից 28-ը տեղի է ունեցել ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նախագահ Աբդուլա Շահիդի այցը Հայաստան, որի շրջանակներում նա հանդիպել է ՀՀ նախագահի և ԱԳ նախարարի հետ, ինչպես նաև այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր:

Սեպտեմբերի 1-ից 2-ը Հայաստան է այցելել ՄԱԿ Քաղաքական և խաղաղաշինության հարցերով վարչության Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Ամերիկաների հարցերով Գլխավոր քարտուղարի փոխտեղակալ Միրոսլավ Յենչան, ով հանդիպումներ է ունեցել ՀՀ փոխվարչապետի, ԱԳ նախարարի և Ազգային ժողովի նախագահի տեղակալի հետ:

Սեպտեմբերի 13-ին Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի առնչությամբ Հայաստանը դիմում է ներկայացրել ՄԱԿ Անվտանգության խորհուրդ՝ պահանջելով գումարել ԱԽ արտահերթ նիստ:

Սեպտեմբերի 15-ին կայացած արտահերթ նիստի ընթացքում ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը ներկայացրել է Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիան և դրա հետևանքները: ԱԽ անդամ պետությունները արձանագրել են ուժի կիրառման անթույլատրելիություն ու կարևորել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի պահպանումը:

Սեպտեմբերի 22-ից 24-ը ՀՀ վարչապետը մասնակցել և ելույթ է ունեցել ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածին: Այցի շրջանակում տեղի են ունեցել նաև վարչապետի մի շարք երկկողմ հանդիպումներ: ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածի շրջանակներում կազմակերպվել է ԱԳ նախարարի այցը Նյու Յորք, որի շրջանակներում կայացել են հանդիպումներ տասնյակ պետությունների ԱԳ նախարարների, ՄԱԿ քարտուղարության բարձրաստիճան պաշտոնյաների և միջազգային այլ կառույցների ներկայացուցիչների հետ:

Դեկտեմբերի 13-ից 16-ը ԱԳ նախարարն աշխատանքային այցով գտնվել է Նյու Յորքում՝ մասնակցելու Անվտանգության խորհրդում Հնդկաստանի նախագահության կողմից կազմակերպված նախարարական քննարկմանը՝ **«Նոր կողմնորոշում բարեփոխված բազմակողմանիության համար»** խորագրով, որին հանդես է եկել ծավալուն

ելույթով: Այցի ընթացքում նա ներկայացրել է Ադրբեջանի գործողությունների արդյունքում Լաչինի միջանցքում ստեղծված իրավիճակը ՄԱԿ Գլխավոր քարտուղարին և մի շարք երկրների իր գործընկերներին:

Դեկտեմբերի 20-ին Հայաստանի դիմումի համաձայն, գումարվել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի արտահերթ հանդիպում՝ քննարկելու Լաչինի միջանցքի գործունեության արգելափակման հետևանքով ստեղծված իրավիճակը: Իր ելույթում ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը Անվտանգության խորհրդի անդամների ուշադրությունն է հրավիրել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչության առջև ծառացած հումանիտար ճգնաժամին և կարևորել Անվտանգության խորհրդի ջանքերը՝ պահանջելու Ադրբեջանից անհապաղ և անվերապահ ապաշրջափակել Լաչինի միջանցքը, ինչպես նաև ապահովելու ՄԱԿ-ի մարդասիրական գործակալությունների անարգել մուտքը Լեռնային Ղարաբաղ:

Տարվա ընթացքում ապահովվել է Հայաստանի բարձրաստիճան պատվիրակությունների մասնակցությունը ՄԱԿ շրջանակներում կազմակերպված մի շարք միջոցառումների, այդ թվում՝ **Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 27-րդ համաժողովին (COP27)** (ՀՀ նախագահի մակարդակով):

Շարունակվել են ակտիվ ջանքերը **ՅՈՒՆԵՍԿՕ**-ում, ինչպես նաև մշակութային արժեքների պաշտպանության հարցերով զբաղվող միջազգային այլ կառույցներում և կազմակերպություններում Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հայկական պատմամշակութային և կրոնական ժառանգության դեմ իրականացվող հանցագործությունների վրա միջազգային կառույցների ուշադրությունը սևեռելու և նրանց օժանդակությամբ այդ հուշարձանների դիտավորյալ ոչնչացման, վնասման կամ ինքնության խեղաթյուրման դեպքերը դատապարտելու և կանխելու ուղղությամբ:

Տարվա ընթացքում ապահովվել է ակտիվ մասնակցություն նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության հարցերով ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան կոմիտեների և մարմինների աշխատանքներում:

Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի քարտուղարության կողմից պատրաստվել է **2020-2022թթ.** ընթացքում Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հայկական մշակութային ժառանգության նկատմամբ իրականացված դիտավորյալ ոչնչացման, նենգափոխման և վանդալիզմի դեպքերի վերաբերյալ ծավալուն զեկույց, որը ներկայացվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենին, ինչպես նաև շրջանառվել մի շարք միջազգային կազմակերպություններում:

Մարտի 16-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Փարիզում աշխատանքային այցի շրջանակներում հանդիպել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեին:

Մարտի 30-ից ապրիլի 13-ը և հոկտեմբերի 5-ից 19-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի նստաշրջաններին՝ համապատասխանաբար 214-րդ և 215-րդ, Հայաստանն առաջին անգամ մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի անդամի կարգավիճակով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեն գործադիր խորհրդի 214-րդ նստաշրջանի ընթացքում վերահաստատել է դեռևս **2020թ. նոյեմբերի 20-ին** արած իր առաջարկը՝ Լեռնային Ղարաբաղ և հարակից տարածքներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելություն իրականացնելու վերաբերյալ:

Հունիսի 7-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ին Հայաստանի անդամակցության 30-ամյակի կապակցությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կազմակերպվել է համերգ՝ ֆրանսահայ անվանի և հայ երիտասարդ կատարողների մասնակցությամբ:

Հուլիսի 5-ից 7-ը Փարիզում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին կոնվենցիայի անդամ պետությունների **9-րդ** գլխավոր համաժողովին հայկական պատվիրակությունն իր ելույթում անդրադարձել է Ադրբեջանի կողմից սանձազերծած ագրեսիայի և դրան հաջորդած շրջանում վերջինիս կողմից հայերի տեղահանման և էթնիկ զտումների ենթարկելու դեպքերին՝ մասնակիցների ուշադրությունը հրավիրելով հայկական մշակութային ժառանգության պահպանմանն ու դրա կենսունակության ապահովմանն ուղղված սպառնալիքին:

Զինված հակամարտությունների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954թ. Հաագայի կոնվենցիայի Երկրորդ արձանագրության միջկառավարական կոմիտեի քարտուղարությունը՝ կայացած նիստին ընդառաջ կոմիտեին ներկայացրած իր զեկույցում վերահաստատել է դեռևս **2020թ. դեկտեմբերին** ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կողմից առաջարկված և կոմիտեի կողմից հայտարարությամբ ընդունված ձևաչափով ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելությունն իրականացնելու անհրաժեշտությունը:

ՀՀ ԱԳ նախարարությունը ներգրավված է եղել **սեպտեմբերի 5-ից 10-ը** Երևանում անցկացված **ՍԹԱՐՄՈՒՍ 6 «50 տարի Մարսի վրա»** խորագրով միջազգային փառատոնի կազմակերպչական աշխատանքներում:

ԱԳՆ նախաձեռնությամբ իրականացված քայլերի արդյունքում Հայաստանում բացվել է «Կապույտ վահան» միջազգային կազմակերպության ազգային գրասենյակ (**սեպտեմբերի 20**):

Դեկտեմբերի 4-ին Բաղդադում կայացած Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի հերթական նախարարական 6-րդ հանդիպմանը մասնակցել է ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանը՝ հնչեցնելով Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության պաշտպանության, իսկ Նախիջևանում՝ ոչնչացման հարցերը:

Դեկտեմբերի 4-ից 8-ը հայկական պատվիրակությունը մասնակցություն է ունեցել Համաշխարհային մշակութային և բնության ժառանգության պահպանության կոնվենցիայի (1972թ.) 50-ամյակի կապակցությամբ Կազանում (ՌԴ) անցկացված միջազգային ֆորումին՝ նվիրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում գրանցված բացառիկ մշակութային և բնության օբյեկտների պահպանության հարցերի քննարկմանը: Ապահովվել է նաև մասնակցություն **դեկտեմբերի 6-ին** Կազանում ԱՊՀ անդամ երկրների արտաքին

գործերի նախարարությունների խորհրդակցությանը՝ նվիրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում ԱՊՀ երկրների համագործակցության ընդլայնմանը:

13.3 Եվրոպայի խորհուրդ

ԵԽ Նախարարների Կոմիտեում, ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ԵԽ մասնագիտացված մարմիններում հետևողական աշխատանք է տարվել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության հետևանքով մարդու իրավունքների առումով և հումանիտար հետևանքները ներկայացնելու և համապատասխան արձագանք ապահովելու նպատակով: Նշված հարցերը քննարկվել են բոլոր բարձրաստիճան այցերի և հանդիպումների ընթացքում: ԵԽԽՎ նստաշրջաններին հարցադրումներ են արվել ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաներին: Շրջանառվել են մեծ թվով փաստաթղթեր, այդ թվում՝ ՀՀ և Լեռնային Ղարաբաղի ԱԳՆ, ՊՆ հայտարարությունները, ՀՀ և Լեռնային Ղարաբաղի ՄԻՊ զեկույցները, այլ փաստաթղթեր: **2022թ.** սեպտեմբերյան ագրեսիայի վերաբերյալ հայտարարություններով հանդես են եկել ԵԽ ԳՔ, ԵԽԽՎ նախագահը և Իռլանդիայի ԱԳ նախարարը, ԵԽԽՎ-ում Հայաստանի պարտավորությունների հարցերով համազեկուցողները: Լաչինի միջանցքի արգելափակման վերաբերյալ հայտարարություն են արել ԳՔ-ը, ԵԽԽՎ-ում Հայաստանի պարտավորությունների հարցերով համազեկուցողները և Մարդու իրավունքների հանձնակատարը: Հանձնակատարն ընդգծել է Եվրոպայի ողջ տարածքում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների համընդհանուր հասանելիության անհրաժեշտությունը: Հայաստանի դիմումների հիման վրա, **սեպտեմբերի 16-ին** և **դեկտեմբերի 21-ին** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջանկյալ միջոցներ է կիրառել Ադրբեջանի նկատմամբ:

Հունվարի 27-ին ԵԽԽՎ-ն հաստատել է **«Ժողովրդավարական հաստատությունների գործունեությունը Հայաստանում»** խորագրով բանաձևը, որտեղ արձանագրվում է 2018թ. ի վեր Հայաստանում ժողովրդավարության զարգացման հարցում նկատելի առաջընթացը, դրական են գնահատվում Հայաստանում անցկացված վերջին երկու խորհրդարանական ընտրությունները, ընտրական օրենսդրության բարեփոխումները:

Մարտի 22-ից 24-ը ԵԽ տեղական և շրջանային իշխանությունների կոնգրեսի 42-րդ նստաշրջանում ընդունվել է **2021թ. դեկտեմբերի 5-ին** կայացած Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ԵԽ Կոնգրեսի դիտորդական առաքելության տեղեկատվական զեկույցը:

Մայիսի 20-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Թուրինում մասնակցել է ԵԽ Նախարարների կոմիտեի **132-րդ** նստաշրջանին: Կայացել են երկկողմ հանդիպումներ Չեխիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Նորվեգիայի, Իսպանիայի, Սերբիայի և Իռլանդիայի արտաքին գործերի նախարարների հետ:

Հունիսի 8-ից 9–ը կայացել է Եվրոպայի Խորհրդի՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի

միջոցով» եվրոպական հանձնաժողովի /Վենետիկի հանձնաժողով/ նախագահ Կլեր Բազի Մալորինի այցը Հայաստան:

Հունիսի 16-ից 17-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրավերով կայացել է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի պաշտոնական այցը Հայաստան: Մարվել է ԵԽ-ին Հայաստանի անդամակցության **20-ամյակին** նվիրված հուշածրար՝ հատուկ դրոշմակնիքով:

Սեպտեմբերի 21-ին ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը Նյու Յորքում հանդիպել է ԵԽ Գլխավոր քարտուղարի հետ:

Սեպտեմբերի 26-ից 29-ը կայացել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Քրիստիննե Գրիգորյանի այցը ԵԽ /Ստրասբուրգ/:

Հոկտեմբերի 10-ին ԵԽԽՎ լիագումար նստաշրջանում տեղի է ունեցել ընթացիկ քննարկում «Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական բախումները՝ ներառյալ բնակավայրերի և քաղաքացիական ենթակառուցվածքների գնդակոծումը» թեմայով:

Հոկտեմբերի 18-ին ԵԽԽՎ 47 պատգամավորի ստորագրությամբ շրջանառվել է Գրավոր հայտարարություն «Հայաստանի ինքնիշխան տարածքի հանդեպ Ադրբեջանի ագրեսիայի դատապարտում» խորագրով:

Նոյեմբերի 3-ին ԵԽ Նախարարների կոմիտեն հաստատել է **Հայաստան-ԵԽ 2023-2026թթ. Գործողությունների ծրագիրը,** որի հիման վրա Եվրոպայի Խորհուրդը կաջակցի իր իրավասությունների ոլորտներում Հայաստանում իրականացվող բարեփոխումներին:

Վավերացվել են ԵԽ հետևյալ փաստաթղթերը. Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիան փոփոխող արձանագրություն (CETS No. 223)**, 25.01.2022թ.**, Եվրոպայի խորհրդի ահաբեկչության կանխարգելման մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն (CETS No. 217)**, 04.05.2022թ.,** Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա (CETS No. 205)**, 04.05.2022թ.**:

13.4 Անկախ պետությունների համագործակցություն

2022թ ընթացքում Հայաստանի Հանրապետությունը շարունակել է ներգրավվածությունը և մասնակցությունն ԱՊՀ մարմինների գործունեության մեջ: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը **2022թ** մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի Աստանայում կայացած նիստին, որի շրջանակներում քննարկվել և ընդունվել են մի շարք փաստաթղթեր՝ միտված կազմակերպության շրջանակներում մասնակից պետությունների միջև փոխգործակցության ընդլայնմանը:

ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը **2022թ մայիսի 20-ին** առցանց ձևաչափով և **հոկտեմբերի 28-ին** Աստանայում մասնակցել է ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստերին: Նիստերի ընթացքում ստորագրվել են մի շարք

փաստաթղթեր՝ տնտեսության, առողջապահության, արտակարգ իրավիճակներին արձագանքման, գյուղատնտեսության ոլորտներում փոխգործակցության զարգացման վերաբերյալ:

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը **2022թ. մայիսի 13-ին** Դուշանբեում և **հոկտեմբերի 12-ին** Աստանայում մասնակցություն է ունեցել ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի նիստերին: ԱՊՀ ԱԳ նախարարների խորհուրդն ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի և կառավարությունների ղեկավարների խորհրդի ընդունմանը ներկայացվող փաստաթղթերի հաստատումից զատ ստորագրել է 2023թ. ԱՊՀ շրջանակներում միջագնական բազմամակարդակ խորհրդատվությունների ծրագիրը:

13.5 Եվրասիական տնտեսական միություն

2022թ. ԵԱՏՄ շրջանակներում կայացել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի **2**, Եվրասիական միջկառավարական խորհրդի **4** նիստեր՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի (ԵԱՏՀ խորհուրդ) **14** նիստեր՝ ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի մասնակցությամբ: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նիստերն անցկացվել են շաբաթը մեկ անգամ:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ **2022թ. մայիսի 27-ին** տեսակապի ձևաչափով կայացած նիստին ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարները հաստատել են ԵԱՏՄ երկրների մակրոտնտեսական քաղաքականության 2022–2023թթ. հիմնական ուղենիշները: Որոշում է կայացվել ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսել Ինդոնեզիայի Հանրապետության հետ:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ **2022թ. դեկտեմբերի 9-ին** Բիշքեկում կայացած նիստին ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարները որոշում են ընդունել Արաբական Միացյալ Էմիրությունների հետ ազատ առևտրի համաձայնագիր կնքելու շուրջ բանակցությունների մեկնարկի մասին, հաստատել են ԵԱՏՄ միջազգային գործունեության 2023թ. հիմնական ուղղությունները:

Փետրվարի 24-ից 25-ը Նուր-Սուլթան քաղաքում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են ԵԱՏՄ մեկ այլ պետության տարածքում ֆիզիկական անձանց ապրանքների էլեկտրոնային առևտրից ԱԱՀ գանձելու հիմնական հայեցակարգային մոտեցումները՝ նպատակակետ երկրի սկզբունքով:

Հունիսի 20-ից 21-ը Մինսկում անցկացված Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի ընթացքում որոշում է կայացվել, որ անդամ պետությունների կառավարությունները ԵԱՏՀ-ի հետ համատեղ ակտիվացնեն աշխատանքը եվրասիական տրանսպորտային ենթակառուցվածքի, այդ թվում՝ Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ ուղղություններով միջազգային տրանսպորտային միջանցքներում ներառված երթուղիների և միջանցքների զարգացման ուղղությամբ:

Օգոստոսի 25-ից 26-ը Չոլպոն-Աթա քաղաքում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին անդամ պետությունների կառավարությունների ղեկավարները քննարկել են փոխադարձ առևտրում հաշվարկներ իրականացնելիս ազգային արժույթների օգտագործման ընդլայնման հնարավորությունները: Ստորագրվել է **«Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագիրը:**

2022թ. հոկտեմբերի 20-ից 21-ը Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստը կայացել է Երևանում: **«Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում Սուեզի ջրանցքի տնտեսական գոտում Ռուսաստանի արդյունաբերական գոտու գործունեության մասին»** միջկառավարական խորհրդի կարգադրությամբ, ԵԱՏՄ անդամ պետությունների ընկերություններին հնարավորություն է տրվել օգտվել Եգիպտոսում Ռուսաստանի արդյունաբերական գոտուց՝ ռուսական բիզնեսի հետ հավասար պայմաններով: Հաստատվել է միասնական կլիմայական օրակարգի ճանապարհային քարտեզը, հավանություն է տրվել **ԵԱՏՄ 2023թ. բյուջեի նախագծին:**

13.6 Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն

ՀՀ ԱԳ նախարարությունը շարունակել է ՀԱՊԿ շրջանակներում ներկայացված միջազգային պայմանագրերի, հայտարարությունների, որոշումների նախագծերի համաձայնեցման համակարգումն ինչպես ներպետական մակարդակում, այնպես էլ՝ ՀԱՊԿ Մշտական խորհրդի շրջանակներում, աջակցել ոլորտային գերատեսչությունների՝ ՀԱՊԿ շրջանակներում կազմակերպվող վարժանքներին, հատուկ գործողություններին մասնակցության հետ կապված հարցերում, ինչպես նաև ռազմական/անվտանգության ոլորտում ՀԱՊԿ անդամ պետությունների հետ երկկողմ համագործակցությանը միտված նախաձեռնություններին:

2022թ. հունվարի 10-ին կայացել է ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի արտահերթ նիստ՝ Ղազախստանում իրավիճակի նորմալացման միջոցառումների մասին ՀԱՊԿ ՀԱԽ որոշման կատարման ընթացքի քննարկման նպատակով:

Մայիսի 15-ին Մոսկվայում կայացել է ՀԱՊԿ անդամ պետությունների առաջնորդների հանդիպում:

Հունիսի 10-ին Երևանում կայացել է ՀԱՊԿ Արտաքին գործերի նախարարների խորհրդի (ԱԳՆԽ) նիստը:

Մայիսի 24-ին տեսակոնֆերանսի ձևաչափով կայացել է ՀԱՊԿ Պաշտպանության նախարարների խորհրդի նիստը:

Հունիսի 17-ին Երևանում կայացել է ՀԱՊԿ Անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեի նիստը:

Հունիսի 6-ին Երևանում կայացել է ՀԱՊԿ խորհրդարանական վեհաժողովի խորհրդի հոբելյանական նիստը:

Ապրիլի 1-ին և **դեկտեմբերի 8-ին** Մոսկվայում կայացել են ՀԱՊԿ Արտաքին գործերի նախարարների խորհրդին առընթեր Աֆղանստանի հարցերով աշխատանքային խմբի հերթական նիստերը:

Ապրիլի 1-ին Երևանում կայացել է ՀԱՊԿ ՌՏՀՄՀ առընթեր գործարար խորհրդի նիստը:

Ապրիլի 20-ից 21-ը Մոսկվայում կայացել է ՀԱՊԿ ՌՏՀՄՀ նախագահին առընթեր ռազմատնտեսական հարցերով աշխատանքային խմբի նիստը:

Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիայի կապակցությամբ՝ **2022թ. սեպտեմբերի 13-ին և հոկտեմբերի 28-ին** կայացել են ՀԱՊԿ ՀԱԽ արտահերթ նստաշրջաններ:

Հոկտեմբերի 7-ին կայացել են ՀԱՊԿ-ում ՀՀ նախագահության շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարության կողմից նախաձեռնված՝ «բարձր մակարդակի ձևաչափի» խորհրդատվությունները:

Նոյեմբերի 22-ին Երևանում կայացել է ՀԱՊԿ ԱԳՆԽ ձևաչափով արտահերթ նիստ:

Նոյեմբերի 23-ին Երևանում կայացել է ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանը: Նույն օրը կայացել է ՀԱՊԿ ԱԳՆԽ, ՊՆԽ և ԱԽՔԿ համատեղ նիստը:

ՀԱՊԿ-ում Հայաստանի նախագահության ընթացքում, ի թիվս այլոց, ընդունվել է Հավաքական անվտանգության մասին Պայմանագրի 30-ամյակի և ՀԱՊԿ 20-ամյակի կապակցությամբ ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հայտարարությունը:

13.7 Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն

2022թ. շարունակվել է ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսությունը և բազմոլորտ համագործակցությունը Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում:

Մարտի 17-ին ՆԱՏՕ-ի կենտրոնական է այցելել ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը: Նախարարը մասնակցել է Դաշինքի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Հյուսիսատլանտյան խորհուրդ+Հայաստան ձևաչափով նիստին և հանդես եկել ելույթով, ինչպես նաև հանդիպել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալի հետ:

Ապրիլի 26-ին կայացել է Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի ԳՔ հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինայի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան: Այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահի, վարչապետի, Պաշտպանության նախարարի և ԱԳ նախարարի տեղակալի հետ: Քննարկվել են երկկողմ հարաբերություններին վերաբերող օրակարգային հարցեր:

Սեպտեմբերի 22-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Նյու Յորքում ՄԱԿ Գլխավոր Վեհաժողովի 77-րդ նստաշրջանի շրջանակում, հանդիպում է ունեցել ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ: Կարևորվել է ադրբեջանական գործողությունների դատապարտման, ՀՀ ինքնիշխան տարածքից ադրբեջանական ստորաբաժանումների

անհապաղ դուրսբերման ուղղությամբ միջազգային հանրության համարժեք արձագանքի անհրաժեշտությունը:

Հոկտեմբերի 11-ին Հայաստան է ժամանել Վրաստանում ՆԱՏՕ-ի Կապի գրասենյակի ղեկավար Ալեքսանդր Վիննիկովը: Վերջինս հանդիպում է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի տեղակալի, Անվտանգության խորհրդի քարտուղարի, մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև Պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ:

Հանրային դիվանագիտության ակտիվացման նպատակով **մարտի 18-ին** կազմակերպվել է ՀՀ պետական մարմինների մամուլի խոսնակների և հանրային կապերի պատասխանատուների այց ՆԱՏՕ-ի կենտրոնական:

13.8 Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն

2022թ. նշվել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը Հայաստանի լիիրավ անդամակցության 10-ամյա հոբելյանը: Ֆրանկոֆոնիայի միջազգային օրը (**մարտի 20**) և Ֆրանկոֆոնիայի երկամյակի ընթացքում (**մարտ-ապրիլ**) կազմակերպվել են հոբելյանական միջոցառումներ:

Այս համատեքստում ՀՀ ԱԳՆ հովանու ներքո կազմակերպվել է գալահամերգ անվանի երգիչ Գարուի մասնակցությամբ (**ապրիլի 21-22**), որին ներկա է գտնվել Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղարի հատուկ հանձնարարություններով խորհրդականը:

Մարտի 16-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Փարիզում մասնակցել է Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովի 40-րդ արտահերթ նիստին, որտեղ հանդես է եկել ելույթով:

Նոյեմբերի 18-ին Թունիսի Ջերբա քաղաքում Ֆրանկոֆոնիայի 18-րդ գագաթնաժողովի շրջանակներում կայացած Ֆրանկոֆոնիայի 43-րդ նստաշրջանին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ամփոփել է 2018թ. Երևանի գագաթնաժողովում անդամ-պետությունների ստանձնած հանձնառությունների կատարման ընթացքը և անցած չորս տարիների ընթացքում Հայաստանի նախագահությունը Կազմակերպությունում:

Նոյեմբերի 19-20-ը ՀՀ վարչապետը մասնակցել և ելույթ է ունեցել Թունիսի Ջերբա քաղաքում կայացած Ֆրանկոֆոնիայի 18-րդ գագաթնաժողովին՝ կազմակերպության նախագահությունը Հայաստանից փոխանցելով Թունիսին: Գագաթնաժողովի շրջանակներում տեղի են ունեցել նաև վարչապետի մի շարք երկկողմ հանդիպումներ:

Գագաթնաժողովի ընթացքում ընդունած Ֆրանկոֆոն տիրույթում ճգնաժամային իրավիճակների, դրանց հաղթահարման և խաղաղության ամրապնդման վերաբերյալ բանաձևի՝ Հայաստանին վերաբերող պարբերություններում Ֆրանկոֆոնիայի անդամ երկրներն ու կառավարությունները, իրենց համերաշխությունը հայտնելով Հայաստանին, անհանգստություն են արտահայտել հայ-ադրբեջանական սահմանին վերջին ռազմական էսկալացիայի առնչությամբ: Միաժամանակ **աջակցություն է հայտնվել** Լեռնային

Ղարաբաղ և հարակից շրջաններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագիտական առաքելության իրականացմանը:

14. Միջազգային տնտեսական համագործակցություն

Ընթացիկ տարում ՀՀ ԱԳՆ համակարգել է միջազգային տնտեսական կառույցներում և ՄԱԿ տարածաշրջանային տնտեսական հանձնաժողովներում ՀՀ շահերի առաջմղմանն ու ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների ներգրավվածության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Հատուկ ուշադրություն է դարձվել պարենային անվտանգության հնարավոր ռիսկերի գնահատմանն ու կանխմանը, Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիայի, Լաչինի միջանցքի շրջափակման, ինչպես նաև գլոբալ և տարածաշրջանային այլ զարգացումների համատեքստում:

ՀՀ ԱԳՆ-ն ակտիվորեն ներգրավվել է միջազգային կառույցներում **(UNECE, ESCAP, TRACECA, BSEC)** տրանսպորտի թեմայով աշխատանքային խմբերում և կոմիտեներում ու հանդես եկել համագործակցության խթանմանն ուղղված համապատասխան նախաձեռնություններով (ազգային պատասխանատուների նշանակում, քարտուղարության հետ քննարկումների կազմակերպում և այլն):

ՀՀ արտաքին գործերի, էկոնոմիկայի և շրջակա միջավայրի նախարարությունների աշխատակիցները մասնակցել են ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության շրջափուլային տնտեսության վերաբերյալ գլոբալ և տարածաշրջանային խորհրդակցություններին:

Ավարտին են հասցվել ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցիչ նշանակելու շուրջ աշխատանքները:

ՀՀ ԱԳՆ ակտիվ ներգրավմամբ **հունիսի 1-ից 3-ը** Երևանում կազմակերպվել է ՄԱԿ Զբոսաշրջային համաշխարհային կազմակերպության (UNWTO) Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստը:

Օգոստոսի 2-ին՝ Իջևանում կայացել է ՄԱԿ Պարենի համաշխարհային ծրագրի հետազոտությունների և վերապատրաստման կենտրոնի բացումը:

Օգոստոսի 8-ին ՀՀ ԱԳՆ և այլ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացել է Հայաստանի պարենային անվտանգության վերաբերյալ ՄԱԿ ՊՀԾ հերթական զեկույցի ներկայացումը:

Արտաքին գործերի և շրջակա միջավայրի նախարարությունների աշխատակիցները **սեպտեմբերի 12-ից 13-ը** մասնակցել են Թբիլիսիում կայացած ՄԱԿ ԵՏՀ բնապահպանական քաղաքականության կոմիտեի բնապահպանական կատարողականի վերանայման հարցերով փորձագիտական խմբի 35-րդ հանդիպմանը՝ Հայաստանի բնապահպանական կատարողականի 2-րդ գնահատման զեկույցի նախագիծը քննարկելու նպատակով:

Զեկույցն ընդունվել է **հոկտեմբերի 3-ից 4-ը** Նիկոսիայում տեղի ունեցած ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնապահպանական քաղաքականության կոմիտեի (CEP) հատուկ նստաշրջանի ընթացքում:

ՀՀ ԱԳՆ համակարգել է **սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 14-ը** Բուխարեստում կայացած ՄԱԿ հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) հերթական Լիազոր համաժողովին մասնակցող ՀՀ պատվիրակության աշխատանքները:

Ապահովվել է ՀՀ պատվիրակության մասնակցությունը **սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 7-ը** Մոնրեալում կայացած Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ասամբլեայի 41-րդ նստաշրջանին:

ՀՀ ԱԳՆ պատվիրակությունը մասնակցել է **դեկտեմբերի 19-ից 20-ը** կայացած Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության Ավագ պաշտոնյաների կոմիտեի (ԱՊԿ) առցանց հանդիպմանը՝ հանդես գալով օրակարգային հարցերի շուրջ ելույթներով, ինչպես նաև՝ ներկայացնելով ՀՀ թեկնածությունը ՍԾՏՀԿ զբոսաշրջության աշխատանքային խմբի 2025-2026թթ. ժամանակահատվածի երկամյա համակարգման ստանձնման համար:

Դեկտեմբերի 21-ին ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանն առցանց ձևաչափով մասնակցել է ՍԾՏՀԿ անդամ պետությունների ԱԳ նախարարների խորհրդի (ԱԳՆԽ) 45-րդ հանդիպմանը: Նախարարի տեղակալը մասնավորապես անդրադարձել է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի և ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ ագրեսիային, ինչպես նաև Լաչինի միջանցքի շարունակվող շրջափակման խնդիրներին:

15. Մարդու իրավունքների պաշտպանության հարցեր

2022թ. ընթացքում շարունակական աշխատանքներ են տարվել մարդու իրավունքների հարցերով մասնագիտացած միջազգային կազմակերպությունների հետ՝ ներկայացնելու մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտում Հայաստանի առաջնահերթությունները, ինչպես նաև **2020թ. աշնանը** Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ Ադրբեջանի սանձազերծված ագրեսիվ պատերազմի ընթացքում և **2022թ. սեպտեմբերի 13-ից 14-ը** ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացրած լայնածավալ ռազմական ագրեսիայի արդյունքում կատարված մարդու միջազգային իրավունքի և միջազգային հումանիտար իրավունքի կոպտագույն խախտումները: Մասնավորապես, ուշադրություն է դարձվել այն փաստի վրա, որ Ադրբեջանի կողմից կատարվել են պատերազմական հանցագործություններ:

Վերոնշյալ հարցերով համագործակցություն է ծավալվել Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի, Մարդու իրավունքների խորհրդի, ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի և պայմանագրային մարմինների շրջանակում:

Հայաստանի կողմից կարևորվել է կապն անվտանգության և մարդու իրավունքների ապահովման միջև, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդու իրավունքների

խախտումները լուրջ սպառնալիք են տարածաշրջանային և միջազգային խաղաղության ու անվտանգության համար:

2022թ. հունիսի 2-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ԱԳՆ համակարգմամբ նախապատրաստված ՄԱԿ ԱԽ **«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի** համաձայն ներկայացվող ՀՀ գործողությունների երկրորդ ազգային ծրագիրը **(2022-2024 թթ.):**

Մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի համար առաջնային է դարձել արձագանքն առավել խոցելի խմբերի և ադրբեջանական ագրեսիայի արդյունքում տուժած բնակչության կարիքներին:

2022թ. ընթացքում աշխատանքներ են տարվել միջազգային գործընկերներին ներկայացնելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ ագրեսիվ պատերազմի արդյունքում գերեվարված անձանց կարգավիճակի և միջազգային հումանիտար իրավունքի նորմերի համաձայն նրանց շահերի ու իրավունքների պաշտպանության ու անհապաղ ազատ արձակման ու հայրենադարձման ուղղությամբ: Վերսկսվել են գերիների, պատանդների և անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքները:

Տարվա ընթացքում շարունակվել է համագործակցությունը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և Անհայտ կորած անձանց հարցերով միջազգային հանձնաժողովի հետ:

2020թ. Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ագրեսիայից հետո ԿԽՄԿ-ն ընդլայնել է իր ներկայությունը ՀՀ-ում՝ գրասենյակներ հիմնելով նաև Գորիսում և Իջևանում ԿԽՄԿ հետ համագործակցությունը իրականացվում է Ադրբեջանում ապօրինի պահվող հայ ռազմագերիների, 2020թ. Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական ագրեսիայի հետևանքով հայկական կողմի անհայտ կորած անձանց, զոհված հայ զինծառայողների աճյունների/մասունքների որոնողական աշխատանքների և այլ մարդասիրական բնույթի հարցերի շրջանակում: Ներկայումս Ադրբեջանի կողմից աճյունների/մասունքների որոնողական աշխատանքները դադարեցված են:

2022թ. մարտի 28-ից 29-ը՝ ՀՀ կառավարության հրավերով Հայաստան է այցելել Անհայտ կորած անձանց հարցերով միջազգային հանձնաժողովի (ICMP) գլխավոր տնօրեն Քեթրին Բոմբերգերի գլխավորած պատվիրակությունը:

Վերոհիշյալ կազմակերպության հետ համագործակցությունը տեղի է ունենում ռազմական գործողություններից դուրս բերված զոհված հայ զինծառայողների մարմիններից/մասունքներից վերցված ոսկրային բարդ փորձանմուշների գենետիկական պրոֆիլավորման շրջանակում՝ հաշվի առնելով կազմակերպության համապատասխան մասնագետների կարողություններն այս ոլորտում (150 փորձանմուշ արդեն իսկ ուղարկվել է ICMP-ի լաբորատորիա):

Հայաստանի Հանրապետությունը շարունակել է իր համագործակցությունը մարդու իրավունքների ոլորտում ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ,

ավելին, ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին ժամանակին ներկայացվել են Հայաստանի բոլոր հաշվետվությունները:

2022թ. հոկտեմբերի 12-ից 13-ը ՄԱԿ Կանանց նկատմամբ խտրականության վերացման Կոմիտեի հետ երկխոսության միջոցով քննարկվել և ընդունվել է **«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի (CEDAW)** իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 7-րդ պարբերական զեկույցը:

2022թ. դեկտեմբերի 14-ին տեղի է ունեցել Հայաստան կողմից ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացի շրջանակում կամավոր կերպով ներկայացվող 3-րդ միջանկյալ զեկույցի հանրային քննարկումը:

2022թ. փետրվարի 21-ից 25-ը տեղի է ունեցել ԵԽ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի այցը:

2022թ. մայիսի 31-ից հունիսի 3-ը Հայաստան է այցելել ԵԽ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ECRI) պատվիրակությունը: Նշված մոնիթորինգային մարմինների հետ երկխոսությունը շարունակվում է:

Նպատակ ունենալով ապահովելու միջազգային մոնիթորինգային մարմինների կողմից ՀՀ-ին տրված հանձնարարականների իրականացումն ու դրանց վերաբերյալ դիրքորոշումների ձևավորման պրակտիկան, ԱԳՆ կողմից ներկայումս մշակվում է Հաշվետվությունների և զեկույցների ներկայացման և դրանց շարունակականությունն ապահովելու նպատակով ազգային մեխանիզմ ստեղծելու վերաբերյալ առաջարկների փաթեթը:

16. Գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրներ

Հայաստանը շարունակել է աջակցել գլոբալ անվտանգության ապահովման ջանքերին, մասնավորապես միջազգային կազմակերպությունների շրջանակներում միջուկային զենքերի չտարածման, զինաթափման և փորձարկումների արգելման հարցերով համագործակցության շրջանակներում:

Խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման ոլորտում ՀՀ կարողությունների զարգացման նպատակով շարունակվել է սերտ համագործակցությունը **Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ)** հետ: **Հոկտեմբերի 4-ից 5-ը** իրականացվել է ԱԷՄԳ գլխավոր տնօրեն Ռաֆայել Մարիանո Գրոսիի աշխատանքային այցը Հայաստան: Այցի արդյունքներով ԱԷՄԳ գլխավոր տնօրենի կողմից բարձր գնահատականներ են տրվել ՀԱԷԿ-ում կատարված բարեփոխումների, արդիականացման և շահագործման անվտանգության վերաբերյալ, ձեռք բերվել պայմանավորվածություններ միջուկային էներգիայի և բժշկության ոլորտում հետագա համագործակցության ուղղությամբ: ՀՀ պատվիրակությունները ակտիվ մասնակցություն են ունեցել ԱԷՄԳ Գլխավոր կոնֆերանսի 66-րդ նստաշրջանի, **«Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» (ACPPNM)** կոնվենցիայի վերանայված տարբերակին միացած անդամ երկրների

կոնֆերանսի և **«Միջուկային էներգետիկան 21-րդ դարում»** խորագրով միջազգային նախարարական կոնֆերանսի աշխատանքներին:

Հաշվետու տարում Քիմիական զենքի արգելման կազմակերպության (ՔԶԱԿ) քարտուղարության հետ ինտենսիվ աշխատանքներ են տարվել Կոնվենցիային ՀՀ օրենսդրության մոտարկման գործընթացի ուղղությամբ: ՀՀ պատվիրակությունը մասնակցել է **նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը** Հաագայում կայացած ՔԶԱԿ անդամ երկրների համաժողովի **27-րդ** նստաշրջանի աշխատանքներին:

Նոյեմբերի 30-ին ՀՀ ԱԳՆ-ում կազմակերպվել է ՀՀ վարչապետի **2019թ. նոյեմբերի 28-ի № 1765-Ա** որոշմամբ հաստատված՝ **«Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, կիրառման, արգելման և դրա ոչնչացման մասին»** կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարման աշխատանքները կանոնակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (ազգային մարմին) նիստը: Նիստի արդյունքներով ընթացք է տրվել կոնվենցիայի ազգային կիրարկման ամրապնդմանն ուղղված մի շարք միջոցառումների:

Աջակցություն է ցուցաբերվել կենսաբանական անվտանգության ամրապնդման գլոբալ նախաձեռնություններին: Ոլորտում ՀՀ կարողությունների ամրապնդման նպատակով շարունակվել է միջազգային համագործակցությունը երկկողմ և բազմակողմ հարթակներում: **Նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 16-ը** ՀՀ պատվիրակությունը Ժնևում մասնակցել է Կենսաբանական զենքի կոնվենցիայի (BWC) իններորդ վերանայման համաժողովի աշխատանքներին:

2022թ. մայիսի 17-ից 18-ը Հայաստան է այցելել ՄԱԿ Ալ-Կաիդայի և «Իսլամական պետության» ու փոխկապակցված միավորների հարցերով պատժամիջոցների կոմիտեի Վերլուծական աջակցության և պատժամիջոցների մոնիտորինգային խումբը: ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված են եղել ՀՀ ԱԳՆ, Անվտանգության խորհրդի, ԱԱԾ, Արդարադատության նախարարության, Գլխավոր դատախազության, Քննչական կոմիտեի և Կենտրոնական բանկի ներկայացուցիչները:

ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչները առցանց եղանակով մասնակցել են **2020թ. մայիսի 30-ից հունիսի 10-ը** Վիեննայում կայացած, ապա՝ **2022թ. օգոստոսի 29-ից սեպտեմբերի 10-ը** Նյու-Յորքում «Հանցավոր նպատակներով տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման հակազդման վերաբերյալ» ՄԱԿ-ի հանձնաժողովի երկրորդ և երրորդ հանդիպումներին: Հանդիպումներին ֆիզիկապես մասնակցել են ՀՀ Արդարադատության նախարարության և Քննչական կոմիտեի ներկայացուցիչները:

2022թ. հուլիսի 7-ից 15-ը և սեպտեմբերի 25-ից 26-ը Հայաստան է այցելել ԱՄՆ Եվրոպական հրամանատարության Աղետների պատրաստվածության կարողությունների գնահատման պատվիրակությունը: Այցի արդյունքներն ամփոփվել են պատվիրակության զեկույցում և առաջարկություններում:

Աշխատանքներ են տարվել **2022թ. փետրվարի 18-ից 20-ը** Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում ՀՀ վարչապետի և մի շարք երկրների բարձրաստիճան պաշտոնյաների միջև հանդիպումների կազմակերպման ուղղությամբ:

17. Խաղաղապահ գործունեություն

Շարունակվել է մասնակցությունը ՆԱՏՕ-ի հովանու ներքո **Կոսովոյում** իրականացվող խաղաղապահ առաքելությանը: ՀՀ ԶՈՒ խաղաղապահ ուժերը շարունակել են ՄԱԿ ԱԽ համապատասխան բանաձևերի շրջանակում հերթափոխով նախատեսված իրենց ծառայությունը **Լիբանանում և Մալիում**:

Բացի **Սիրիայի** Հալեպ նահանգից, ՀՀ հումանիտար առաքելությունը սկսել է ականազերծման աշխատանքներ իրականացնել նաև Դամասկոսի մերձակա Դարաա շրջանում:

18. Իրավապայմանագրային դաշտ

2022թ. ընթացքում նախարարության կողմից պատրաստվել և ստորագրման է ներկայացվել **71** միջազգային պայմանագիր, իրականացվել է **68** միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման գործընթաց: **2022թ.** ավարտի դրությամբ նախագծային և փոխհամաձայնեցման ընթացակարգերի փուլում է գտնվում միջազգային երկկողմ և բազմակողմ պայմանագրերի շուրջ **480** նախագծեր: Փորձաքննության է ենթարկվել իրավաբանական պարտադիր ուժ չունեցող միջազգային բնույթի շուրջ **120** փաստաթուղթ: **2022թ.** ընթացքում ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել և ընդունվել է **18** որոշման նախագիծ, շուրջ **90** օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ պետական կառավարման համակարգի մարմիններին տրամադրվել է ՀՀ ԱԳՆ դիրքորոշում: Պատրաստվել են իրավական բնույթի մոտ մեկ տասնյակ վերլուծական տեղեկանքներ:

19. Հյուպատոսական ծառայություն

ԱԳՆ հյուպատոսական վարչությունը և ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինները շարունակել են իրականացնել միջազգային և ներպետական օրենսդրությամբ սահմանված շրջանակներում օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցության ցուցաբերումը:

Մասնավորապես, Ուկրաինայում ծավալվող ռազմական գործողություններով պայմանավորված՝ Ուկրաինայից Հայաստան վերադառնալ ցանկացող ՀՀ քաղաքացիներին հյուպատոսական աջակցություն ցուցաբերելու նպատակով **մարտի 3-ից՝** ռազմական գործողությունների թեժ փուլում, ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական

վարչության և որոշ դեսպանությունների կողմից տրամադրվել են շուրջ **1200** էլեկտրոնային վերադարձի վկայականներ, որոնց իսկությունը հնարավոր էր ստուգել QR-կոդի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական **www.e-verify.am** հարթակում: Սույն գործընթացը հնարավորություն է տվել Ուկրաինայի տարբեր տարածքներում գտնվող ՀՀ քաղաքացիներին, ովքեր չունեն վավերական անձնագիր, ստանալ ՀՀ վերադարձի էլեկտրոնային վկայական և առանց ֆիզիկապես դեսպանություն այցելելու, հատել Ուկրաինայի սահմանը և վերադառնալ Հայաստան: Նույն ժամանակահատվածում Ռումինիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Սլովակիայի և Մոլդովայի՝ Ուկրաինայի հետ սահմանակից կետեր են գործուղվել դիվանագետներ՝ տեղում ՀՀ քաղաքացիների տարհանման հարցերում հնարավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Բացի այդ, շարունակվել է տեսակապով հյուպատոսական ծառայությունների տրամադրումը այնպիսի երկրներում և հեռավոր վայրերում գտնվող ՀՀ քաղաքացիներին, որտեղ Հայաստանի Հանրապետությունը չունի դեսպանություն կամ հյուպատոսական հիմարկ: Օրինակ՝ Ավստրալիա, Հեռավոր Արևելք, Թուրքիա, աֆրիկյան երկրների գերակշիռ մասը և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում գործարկվել է էլեկտրոնային հյուպատոսական համակարգի նորացված տարբերակը: Համակարգը հագեցած է ժամանակակից տեխնիկական լուծումներով և հնարավորություն է ընձեռում գրանցվել և մուտք գործել համակարգ, հետևել դիմումների ընթացքին, կատարել մի շարք առցանց գործարքներ, լրացնել առցանց հայտեր, արագ փնտրել ու ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ դիվանագիտական ներկայացուցչություններում գործող հյուպատոսական կետերի գործառույթների, տեղակայման հասցեների, հեռախոսահամարների, մատուցվող ծառայությունների և այլ հարցերի վերաբերյալ: Համակարգում ներառվել են նոր ծառայություններ, ավելացվել են վճարումներ կատարելու և օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանություն (հյուպատոսական հիմնարկ) այցելություն ամրագրելու հնարավորությունը, որի շնորհիվ հյուպատոսական ծառայությունների մատուցման գործընթացը կիրականացվի առավել կազմակերպված ձևով՝ առանց հերթերի կուտակումների: Տեղեկատվությունը հրապարակված է https://consular.e-gov.am/am/ էլեկտրոնային հյուպատոսական համակարգի պաշտոնական կայքէջում:

Նոր համակարգի գործարկման շրջանակներում նախատեսվում է ավելացնել ամբողջությամբ առցանց մատուցվող հյուպատոսական ծառայությունների ցանկը:

Հաշվետու տարում ընթացքավորվել է **79303** ՀՀ մուտքի արտոնագրի և ՀՀ քաղաքացիություն ստանալու և դադարեցնելու **12279** գործ:

Միաժամանակ, 2022թ. ընթացքում ՀՀ Կառավարության որոշումներով սահմանվել է ՀՀ առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ Քուվեյթի (միակողմանիորեն) և Էկվադորի (փոխադարձության սկզբունքով) քաղաքացիների համար:

20. Հանդիպումներ և փոխադարձ այցելություններ

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում կայացել է Հանրապետության նախագահներ Արմեն Սարգսյանի և Վահագն Խաչատուրյանի **7** (1 պետական, 1 պաշտոնական, 5 աշխատանքային) այց, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի **23** (3 պաշտոնական, 20 աշխատանքային), ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի **27** (4 պաշտոնական, 23 աշխատանքային) այց:

Հայաստան է այցելել օտարերկրյա պետության **7** նախագահ (2 պաշտոնական, 5 աշխատանքային այցեր), կառավարության **6** ղեկավար (աշխատանքային այցեր), արտաքին գերատեսչության **7** ղեկավար (3 պաշտոնական, 4 աշխատանքային այցեր): Տեղի է ունեցել միջազգային կազմակերպության ղեկավարի **9** աշխատանքային այց:

21. Դիվանագիտական հարաբերություններ

2022թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետությունն ունի հաստատված դիվանագիտական հարաբերություններ **178** պետության հետ: Հայաստանում հավատարմագրված է **38** ռեզիդենտ դեսպանություն, **2** դեսպանության գրասենյակ, **1** մշտական ներկայացուցչություն, **78** ոչ ռեզիդենտ դեսպանություն, **31** միջազգային կազմակերպության ներկայացուցչություն, **2** գլխավոր հյուպատոս և **45** պատվավոր հյուպատոս:

2022թ. ագրեման է տրվել **10** օտարերկրյա դեսպանների, հավատարմագրեր են հանձնել **29** դեսպան, նշանակվել է **1** միջազգային կազմակերպության ներկայացուցիչ և **1** գլխավոր հյուպատոս: Հիմնվել է օտարերկրյա **2** պատվավոր հյուպատոսի գրասենյակ, ինչպես նաև համաձայնություն է տրվել ՀՀ-ում օտարերկրյա **17** ռազմական կցորդի նշանակմանը:

2022թ. ընթացքում օտարերկրյա պետություններում հավատարմագրվել է ՀՀ **25** դեսպան և **1** ներկայացուցիչ միջազգային կազմակերպությունում: Նշանակվել է **1** գլխավոր հյուպատոս, **5** պատվավոր հյուպատոս և **1** ռազմական կցորդ:

Հաշվետու ժամանակահատվածի դրությամբ արտերկրում ՀՀ-ն ունի հավատարմագրված **40** ռեզիդենտ դեսպան, **2** գործերի ժամանակավոր հավատարմատար, **2** դեսպան նստավայրը՝ ք. Երևան: ՀՀ դեսպանները համատեղության կարգով հավատարմագրված են ընդհանուր առմամբ **90** երկրում:

2022թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված **19** միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են ՀՀ **10** գլխավոր հյուպատոսություն, **2** հյուպատոսական կետ և **56** պատվավոր հյուպատոսի գրասենյակ:

22. Դիվանագիտական դպրոց

2022թ. ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը շարունակել է իրականացնել ՀՀ կառավարության որոշմամբ և իր կանոնադրությամբ սահմանված նպատակները.

դիվանագետների և պետական մարմինների աշխատակիցների վերապատրաստում, դիվանագիտական կադրերի պատրաստում, միջազգային գիտակրթական համագործակցություն մասնակցություն և այլ ուսումնական ծրագրերի իրականացում:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցում անցկացվել են վերապատրաստման հինգ ծրագրեր՝ «Հյուպատոսական գործունեություն» (մեկամսյա), «Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների» (եռամսյա) երկու վերապատրաստումներ, որից մեկը՝ արտաքին մրցույթով ընդունված դիվանագետների համար, «Արարողակարգային հարցերի համար պատասխանատու աշխատակիցների» վերապատրաստում (երկշաբաթյա) և արտերկրի երիտասարդ դիվանագետների համար դիվանագիտական վերապատրաստում (երկշաբաթյա դասընթաց Իրաքյան Քուրդիստանի երիտասարդ դիվանագետների համար):

Անցկացվել են օտար լեզուների դասեր ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի աշխատակիցների և Դիվանագիտական դպրոցի ունկնդիրների համար:

2022թ. վերականգնվել են ունկնդիրների ուսումնական այցերն, ընդլայնվել է դրանց աշխարհագրությունը:

Շարունակվել է համագործակցությունը դիվանագիտական կրթության այլ հաստատությունների և ՀՀ-ում հավատարմագրված դիվանագետների հետ, մասնակցությունը միջազգային ձևաչափերին:

23. Միջազգային հանրային կարծիք

2022թ. շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի միջազգային դրական հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը:

Հանրապետության նախագահը, վարչապետն ու արտաքին գործերի նախարարը մի քանի տասնյակ հարցազրույցներ են տվել միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներին, հանդես են եկել մամուլի ասուլիսներով՝ ներկայացնելով տարածաշրջանային և միջազգային տարբեր գործընթացների խնդիրների ու դրանց հանգուցալուծման վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումը:

ԱԳՆ կողմից հրապարակվել են **1034** մամուլի հաղորդագրություններ, հայտարարություն և հարցազրույց, որոնք թարգմանվել և տարածվել են ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային լրատվամիջոցների շրջանում:

Շարունակվել է աջակցությունը միջազգային լրատվամիջոցներին՝ լուսաբանելու Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները: ԱԳՆ կողմից տարվա ընթացքում կարճաժամկետ ընթացիկ հավատարամագրում է տրամադրվել օտարերկրյա լրատվամիջոցների **314** ներկայացուցիչների, որոնց տրամադրվել է նաև համապարփակ աջակցություն Հայաստանում իրենց գործունեություն ծավալու համար:

Իրականացվել է **2023թ**. տարեկան հավատարմագրումը՝ շուրջ **150** լրագրող:

ԱԳՆ նախաձեռնությամբ օտարերկրյա մամուլում հրապարակվել են արտերկրում ՀՀ դեսպանների հարցազրույցներ, ինչպես նաև Հայաստանի դրական կերպարը ներկայացնող հոդվածներ:

Իրականացվել են ինտենսիվ աշխատանքներ միջազգային հանրությանը իրազեկելու սեպտեմբերին Ադրբեջանի կողմից սանձազերծած ագրեսիայի և դրա ընթացքում տեղ գտած միջազգային իրավունքի կոպտագույն խախտումների մասին (այդ թվում ագրեսիայի ենթարկված բնակավայրեր լրագրողների այցելությամբ), ինչպես նաև Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

ՀՀ վերաբերյալ հաղորդաշարեր և հոդվածներ պատրաստելու նպատակով Հայաստան են այցելել մի շարք միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչներ՝ մասնավորապես BBC, Al Jazeera, Deutsche Welle, Agence France-Presse, The Economist, Le Monde, Le Figaro Magazine, VICE News, Россия 24, ТАСС, RBK և այլն:

Վարվել են ԱԳՆ սոցիալական հարթակները և դրանց միջոցով օպերատիվ կերպով հայաստանյան և միջազգային հանրությանն է հասցվել տեղեկատվություն: Համակարգվել է ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների պաշտոնական հաշիվների աշխատանքը, մշակվել են սոցիալական մեդիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների էջերի վարման ձեռնարկներ:

Հաշվետու տարում տեղի ունեցած իրադարձությունների և միջոցառումների մասին ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն տեղեկատվությունը տեղադրվել է ԱԳՆ պաշտոնական կայքէջում, իսկ տեղեկատվությունն առավել օպերատիվ և հասանելի տարբերակով միջազգային հանրությանը ներկայացնելու նպատակով օգտագործվել են հետևյալ պաշտոնական օգտահաշիվները.

Twitter (@MFAofArmenia, @ArmDiplo, @AraratMirzoyan, @ArmSpoxMFA),

Facebook (@MFA.Armenia, @ArmDiplo, @Armenia, @ArmSpoxMFA),

Telegram (ՀՀ ԱԳՆ/MFA of Armenia),

Youtube (Ministry of Foreign Affairs of Armenia),

Instagram (@mfa_of_armenia),

Ցեղասպանությունների կանխարգելման օրակարգի ֆեյսբուքյան և թվիթերյան հաշիվները (Yerevan Global Forum, @AgendaToPrevent):

Շարունակվել են ԱԳՆ թվային դիվանագիտության թիմի կողմից կառավարվող «Armenia» սոցիալական մեդիա հարթակների աշխատանքները՝ ուղղված Հայաստանի ներկայացմանը: ԱԳՆ կողմից վարվող «Armenia» սոցիալական հարթակներում **2022թ.** ընթացքում արվել են Հայաստանի ու հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, տեխնոլոգիական ու գիտական ձեռքբերումները, Հայաստանը որպես հետաքրքիր ու դեռևս ամբողջովին չբացահայտված զբոսաշրջային ուղղություն լինելու հանգամանքը,

Հայաստանում կատարված խոշոր ներդրումները և տնտեսական հնարավորությունները ներկայացնող **շուրջ 855** հրապարակումներ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցությամբ, մարտ ամսվա ընթացքում իրականացվել են լրագրողների և հայաստանյան հանրության շրջանում մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված միջացառումներ, այդ թվում մեկօրյա համաժողով՝ հրավիրյալ բանախոսներով:

ՀԱՊԿ ԱԳ նախարարների խորհրդի նիստի, ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստի, ՀԱՊԿ ԱԳ նախարարների խորհրդի ձևաչափով արտահերթ նիստի, ՀԱՊԿ ԱԳ, պաշտպանության նախարարների և անվտանգության խորհրդի քարտուղարների համատեղ նիստեր և ՀԱՊԿ գագաթնաժողովի շրջանակներում կազմակերպվել և համակարգվել են լուսաբանման աշխատանքները (ավելի քան **500** լրագրող):

«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 4-րդ Գլոբալ ֆորումի շրջանակներում կազմակերպվել ու համակարգվել են ֆորումի լուսաբանման աշխատանքները:

Դեկտեմբերին մեկնարկել են ԱԳՆ ուսումնաճանաչողական այցերը: